


1380



Գ. Ի. Թ. Ք.

## Ա. Ո. Ա. Կ. Ա. Ց


معارف عمومیه نظارت جلیله سنك ۲۷ جاذی الآخر ۹۹ و  
مايس ۹۸ تاریخی و ۲۱۸ نومر ولی رخصتنامه سیله نشر او لنشدر  
و مصارف آمریقان ییل شرکتی طرفندن تسوید او لنه رق  
طبع او لنشدر

ԿՈՍՏԱՆԴՐԵՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ

Ա. ՅԱԿՈԲՅԱՆ ՊՕՅԱՃԵԱՆ

1389



# ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑ

## ԳԼՈՒԽ Ա

- 1 Խարայէլի թագաւորին Դաւիթի որդւոյն  
Սողոմոնին առակները :
- 2 Իմաստութիւնը ու խրատը գիտնալու հա-  
մար,  
Հանձարին խօսքերը հասկընալու համար .
- 3 Իմաստութեան կրթութիւնը ընդունելու  
համար ,  
Այսինքն արդարութիւնը , դատաստանը և  
ուղղութիւնը .
- 4 Միամիտներուն սրամոտութիւն տալու հա-  
մար ,  
Ու երիտասարդներուն գիտութիւն և հան-  
ձար :
- 5 Իմաստունը թող լսէ ու էր իմաստութիւնը  
աւելցընէ ,  
Ու հանձարեղ մարդը խոհեմութիւն ստա-  
նայ ,
- 6 Առակը ու նմանութիւնը հասկընալու հա-  
մար ,  
Կաև իմաստուններուն խօսքերը ու անդնց  
խրթնաբանութիւնները :
- 7 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է ,  
Բայց յիմարները իմաստութիւնը ու կրթու-  
թիւնը կ'անարդեն :
- 8 Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ ըրէ ,  
Ու քու մօրդօրէնքը մի մերժեր .

- 9 Քանզի անոնք քու գլուխդ՝ շնորհաց պսակ ,  
Եւ քու պարանոցդ մանեակներ պիտի ըլ-  
լան :
- 10 Որդեակ իմ, թէ որ մեղաւորները քեզ  
գլխէ հանել ուզեն,  
Դուն անոնց հաւանութիւն մի տար :
- 11 Թէ որ ըսեն, Մեզի հետ եկուր,  
Արեան համար դարանամուտ ըլլանք,  
Անմեղ մարդուն համար առանց պատ-  
ճառի ծածուկ տեղ սպասենք .
- 12 Զանոնք գերեզմանի պէս ողջ ողջ  
Եւ գուբը իջնողներուն պէս ամբողջ կըլ-  
լենք .
- 13 Ամէն տեսակ պատուական ստացուածք  
գտնենք ,  
Ու մեր տուները աւարով լեցընենք .
- 14 Քու վիճակդ մեր մէջը ձգէ .  
Ամէնքս մէկ քսակ ունենանք .
- 15 Որդեակ իմ, անոնց հետ ճամբայ մի երթար .  
Անոնց շաւիղէն քու ոտքերդ ետ պահէ .
- 16 Քանզի անոնց ոտքերը չարութեան կը վա-  
զեն ,  
Եւ ո իւն թափելու կ'արտորան :
- 17 Յիրաւի ամէն թռչունին աչքերուն առջեր  
Պարապ տեղը վարմեր կը լարուի .
- 18 Բայց անոնք իրենց արեանը համար դարան  
կը գործեն ,  
Ու իրենց կենացը համար ծածուկ տեղ կը  
սպասեն ,
- 19 Ամէն ագահին ճամբաները ասանկ ն .  
Աբահունիւնը իրեն անձնատւ ւր եղողները կը  
մեռցընէ :
- 20 Իմաստութիւնը դուրսը բարձրածայն կ'ա-  
ղաղակէ ,

- Ո - Հրապարակներու մէջ իր ձայնը կու տայ :  
 21 Անիկա բազմութիւն և ղած տեղերուն գլու-  
 խը՝
- Ե - դրանց մուտքերուն մէջ կ'աղաղակէ ,  
 Ո - քաղաքին մէջ իր խօսքերը կը խօսի ու  
 իշուն :
- 22 Ով անմիտներ , մինչև ե՞րբ անմտութիւնը  
 պիտի սիրէք .
- Մինչ է՞բ ծաղը ընողները ծաղը ընելով  
 պիտի զուարձանան ,
- Ու յիմարները գիտութիւնը ատեն :
- 23 Իմ յանդիմանութեանս դարձէք .  
 Ահա իմ հոդիս ձեր վրայ պիտի թափեմ ,  
 Իմ խօսքերս ձեզի պիտի հասկըցընեմ :
- 24 Որովհետեւ ես կանչեցի , ու դուք չուզեցիք  
 լէւ .
- Զեռքս երկրնցուցի , ու մտիկ ընող չեղաւ .
- 25 Հապա իմ բոլոր խրատներս մերժեցիք ,  
 Եւ իմ յանդիմանութիւնս չուզեցիք .
- 26 Ես ալ ձեր թշուառութեանը վրայ պիտի  
 ծիծաղիմ ,
- Ու ձեր վախը հասնելուն ծաղը պիտի ընեմ .
- 27 Երբոր ձեր վախը հեղեղի պէս հասն ,  
 Ձեր թշուառութիւնը մըրիկի պէս պա-  
 տահի ,
- Ե - ձեր վրայ նեղութիւն ու տառապանք  
 գայ ,
- 28 Անատենը ինձի պիտի աղաղակեն , ու պա-  
 տասիսան պիտի չտամ .
- Զիս պիտի փնտռեն ու պիտի չկրնան գլու-  
 խել .
- 29 Որովհետեւ գիտութիւնը ատեցին ,  
 Ու Տէրոջը վախը չընտրեցին .
- 30 Իմ խրատներս չուզեցին ,  
 Ու բոլոր յանդիմանութիւնս անարդեցին .

- 31 Ուրեմն անոնք իրենց ճամբուն պտուղէն պիտի ուտեն ,  
Ու իրենց խորհուրդներէն պիտի կշտանան :  
32 Վասն զի անմիտներուն խոտորիլը զիրենք պիտի մեռցընէ ,  
Եւ յիմարներուն անհոգութիւնը զիրենք պիտի կորաբնցընէ ,  
33 Բայց ինձի մտիկ ընողը ապահովութեամբ պիտի բնակի ,  
Ու չարիքներու վախէն հանդարտ պիտի ըլլայ :

## ԳԼ. Բ

- 1 Որդեակ իմ , թէ որ իմ խօսքերս ընդունիս ,  
Ու իմ պատուիրանքներս քովդ պահես ,  
2 Այնպէս որ ականջդ իմաստութեան տաս ,  
Ու սիրտդ հանձարին բանաս ,  
3 Թէ որ դուն իմաստութիւնը +եզէ կանչես ,  
Եւ քու ձայնդ հանձարին ուղղես ,  
4 Թէ որ զանիկա արծաթի պէս փնտուես ,  
Ու ծածուկ գանձերու պէս խնդրես ,  
5 Անատենը Տէրոջը վախը պիտի հասկընաս ,  
Եւ Աւտուծոյ գիտութիւնը պիտի գտնես .  
6 Վասն զի իմաստութիւնը Տէրը կու տայ .  
Գիտութիւնը ու հանձարը անոր բերնէն է :  
7 Անիկա ուղիղներուն համար փրկութիւն կը պահէ .

Անիկա ուղղութեամբ քալողներուն վահամն է ,

- 8 Որ արդարութեան ճամբաները պաշտէցանէ ,  
Ու իր սուրբերուն ճամբան չգահէ :  
9 Անատենը արդարութիւնը , դատաստանը և  
ուղղութիւնը ,  
Ամէն աղէկ ճամբան պիտի հասկընաս :

- 10 Երբոր իմաստութիւնը քու սրտիդ մէջը  
մտնէ ,  
Եւ գիտութիւնը քու հոգւոյդ ախորժելի  
ըլլայի ,
- 11 Խոհեմութիւնը քեզ պիտի պահէ ,  
Ու հանձարը քեզ պիտի պաշտպանէ ,
- 12 Որ քեզ չար Տորդուն ճամբայէն ,  
Նենդութիւններ խօսող մարդէն աղատէ .
- 13 Անոնց որ ուղիղ ճամբան թողուցեր են ,  
Որ խաւար ճամբաններու մէջ քալեն .
- 14 Չարութիւն ընելով կ'ուրախանան ,  
Եւ չարին նենդութիւններովը կը ցնծան .
- 15 Որոնց ճամբանները ծուռ են ,  
Ու անոնց ընթացքը խոտորնակ է :
- 16 Որ նաև քեզ աղատէ օտար կնիկէն ,  
Ըողոքորթութիւն խօսող օտար կնիկէն .
- 17 Ան որ իր երիտասարդութեան բարեկամը կը  
թողու ,
- Եւ իր Աստուծոյն ուխտը կը մոռնայ .
- 18 Քանզի անոր տունը մահուան կը տանի ,  
Ու անոր շաւիղները մեռելներուն :
- 19 Անոր գացողները բնաւ չեն դառնար ,  
Եւ կենաց ճամբաններուն չեն հասնի :
- 20 Որպէս զի բարի Տորդու ճամբան երթաս ,  
Ու արդարներուն շաւիղները պահես :
- 21 Քանզի ուղիղները երկրի վրայ պիտի ընակին ,  
Եւ կատարեալները անոր մէջը պիտի Ծնան :
- 22 Բայց ամբարիշտները երկրէն պիտի կորսուին ,  
Ու անօրէնները անկէ պիտի փրցուին :

ԳԼ. Գ

- 1 Օրդեակ իմ , մի մոռնար իմ օրէնքս ,  
Հապա քու սիրտդ թող իմ պատուիրանք-  
ներս պահէ .

- 2 Ինչու որ քեզի երկայն օրեր ու կենդանութեան տարիներ  
Եւ յաջողութիւն պիտի աւելցընեն :
- 3 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քեզ չժողուն .
- Զանոնք քու պարանոցիդ վրայ կապէ ,  
Քու սրտիդ տախտակին վրայ դրէ զանոնք :
- 4 Այսպէս Աստուծոյ և մարդոց առջեր Շնորհք ու բարի համարում պիտի գտնես :
- 5 Քու բոլոր արտովը Տէրոջը ապաւինէ ,  
Եւ քու իմաստութեանդ մի վստահիր :
- 6 Քու ամէն ճամբաներուդ մէջ զանիկա ճանչցիր .
- Ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ :  
7 Դուն քու աչքիդ առջեր իմաստուն մի ըլլար .
- Տէրոջմէ վախցիր ու չարութենէ ետ քաշուէ :  
8 Ասիկա քու ջիղերուդ առողջութիւն ,  
Եւ քու ոսկորներուդ պարարտութիւն կ'ըլլայ :
- 9 Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ  
Եւ քու բոլոր բերբերուդ երախայրիներէն .
- 10 Եւ քու շտեմարաններդ առատութեամբ  
պիտի լեցուին ,  
Ու հնձաններէդ նոր դինին դուրս պիտի թափի :
- 11 Որդեակ իմ , Տէրոջը խրատը մի անարդէր ,  
Ու անոր յանդիմանութենէն մի թուլնար .
- 12 Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ ,  
Ինչպէս որ հայր մը իր սիրական զաւակին կ'ընէ :
- 13 Երանի ան մարդուն , որ իշխատութիւն կը  
գտնէ ,  
Ու ան մարդուն որ հանձ'ար կը ստանայ .

- 14 Վասն զի անոր շահը արծաթի շահէն աղէկ է,  
Ու անոր արդիւնքը մաքուր ոսկիէն :
- 15 Անիկա գոհարներէն պատուական է .  
Եւ քու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար  
անոր հաւասարիլ :
- 16 Անոր աջ ձեռքին մէջ՝ օրերու երկայնու-  
թիւն ,  
Եւ ձախ ձեռքին մէջ հարստութիւն ու  
փառք կայ .
- 17 Անոր ճամբաները հաճոյական ճամբաներ  
են ,  
Եւ անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն  
են :
- 18 Անիկա իրեն յարողներուն կենաց ծառ է .  
Ու զինքը բռնողները երջանիկ կ'ըլլան ,
- 19 Տէրը իմաստութեամբ հիմնեց երկիրը ,  
Եւ հանճարով հաստատեց երկինքը :
- 20 Անոր գիտութեամբը անդունդները կը պատ-  
ռին ,  
Ու ամպերը ցող կը կաթեցընեն :
- 21 Որդեակ իմ՝ ասոնք քու աչքերուդ առջեւն  
չերթան .  
Իմաստութիւնը ու խոհեմութիւնը + և  
պահէ .
- 22 Եւ քու հոգւոյդ կեանք՝  
Ու քու պարանոցիդ զարդ ըլլան :
- 23 Անատենը ճամբադ ապահովութեամբ պիտի  
քալես ,  
Եւ քու ստրդ պիտի չսահի :
- 24 Թէ որ պառկիս՝ պիտի չվախնաս ,  
Ու թէ որ քնանաս՝ քունդ անոյշ պիտի ըլ-  
լայ :
- 25 Պիտի չվախնաս յանկարծահաս վախէն ,  
Ոչ ալ ամբարիշտներուն կորուստէն՝ երբոր  
գայ .

- 26 Վասն զի քու յոյսդ Տէրը պիտի ըլլայ ,  
Եւ քու ոտքդ պիտի պահէ , որ չբռնուի :  
27 Երբոր ձեռքէդ աղէկութիւն ընել կու գայ ,  
Կարօտ եղողէն մի արգիլեր զանիկա :  
28 Քու դրացիիդ բնաւ մի ըսեր , Գնա ու դար-  
ձեալ եկուր ,  
Կամ վաղը կու տամ , Երբոր քու քովդ կայ :  
29 Քու դրացիիդ դէմ չարութիւն մի մտածեր ,  
Քանի որ անիկա վստահութեամբ քեզի հետ  
կը բնակի :  
30 Առանց պատճառի մարդու հետ մի վիճիր ,  
Երբոր անիկա քեզի չարութիւն մը ըրած չէ :  
31 Բոնաւոր մարդուն մի նախանձիր ,  
Ու անոր ճամբաները բնաւ մի ընտրեր  
32 Վասն զի ծուռ մարդը Տէրոջը առջելպիղծէ .  
Բայց Անոր ընտանութիւնը արդարոց հետ է :  
33 Ամբարիշտ մարդուն տանը մէջ Տէրոջը ա-  
նէծքը կայ .  
Բայց արդարներուն բնակարանը Անիկա  
կ'օրհնէ :  
34 Յիրաւի անիկա ծաղը ընողները ծաղը կ'ընէ ,  
Բայց խոնարհներուն շնորհք կու տայ :  
35 Իմասնունները փառք պիտի ժառանդեն ,  
Բայց յիմարներուն բարձրանալը անարդանք  
պիտի ըլլայ :

## ԳԼ. Դ

- 1 Որդիք , Ֆեր հօրը խրառը լսեցէք ,  
Ու մտիկ ըրէք որ իմաստութիւնը ճանչնաք :  
2 Վասն զի ձեզի աղէկ կրթութիւն կու տամ ,  
Իմ օրէնքս մի թողուք :  
3 Քանզի ես իմ հօրս տղան է՞՞ ,  
Փափուկ ու սիրելի՝ իւ՞ մօրս առջելը :  
4 Անիկա ինծի կը սորվեցընէր ու կ'ըսէր ,

Քու սիրտդ իմ խօսքերս թող բռնէ .

Իմ պատուիրանքներս պահէ ու ապրէ :  
5 Իմաստութիւն ստացիր , խոհեմութիւն  
ստացիր .

Մի մոռնար , ու իմ բերնիս խօսքերէն մի  
խոտորիր .

6 Զանիկա մի թողուր , ու անիկա քեզ պիտի պաշտ-  
պահէ .

Զանիկա սիրէ , ու անիկա քեզ պիտի պաշտ-  
պահէ :

7 ԱՀՆ բանին գլուխը իմաստութիւնն է , իմաս-  
տութիւն ստացիր .

Ու ամէն ստացած բաներուդ հետ խոհեմու-  
թիւն ստացիր :

8 Զանիկա մնձարէ , ու անիկա քեզ պիտի պարձրացընէ .

Թէ որ զանիկա գրկես՝ քեզ պիտի պատուէ :

9 Անիկա քու գլխուդ շնորհաց զարդ պիտի  
տայ .

Քեզի փառաց պսակ պիտի պարզեէ :

10 Մտիկ ըրէ , որդեակ իմ , ու իմ խօսքերս ըն-  
դունէ .

Եւ քու կենացդ տարիները պիտի շատնան :

11 Քեզի իմաստութեան ճամբուն մէջ +ուլ-  
սորվեցուցի .

Քեզ ուղղութեան շաւիղներուն մէջ պտըտ-  
ցուցի .

12 Ու քալելու ատենդ ոտքիդ քայլերը չնեզ-  
նան ,

Ու վազելու ատենդ չսահիս :

13 Ամուր բռնէ խրատը ու բնաւ մի թողուր .  
Զանիկա պահէ , վասն զի քու կեանքդ անի-  
կա է :

14 Ամրարիշտներուն ճամբան մի երթար .

Ու չարերուն ճամբուն մէջ մի քայլեր :

- 15 Անկէ զգուշացիր , անոր քովէն մի անցնիր .  
Անկէ խոտորէ ու անցիր :
- 16 Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն  
չեն քնանար .
- Ու թէ որ հէիւ չկործանեն՝ քուներնին կը  
փախչի :
- 17 Քանզի անոնք ամբարշտութեան հացը կ'ու-  
տեն ,
- Ու անիրաւութեան դինին կը խմեն :
- 18 Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսին  
պէս է ,
- Որ երթալով կը լուսաւորուի , մինչև որ կա-  
տարեալ օր ըլլայ :
- 19 Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է ,  
Ու չեն դիտեր թէ ինչ բանով իրենց ոտքը  
պիտի սահի :
- 20 Որդեակ իմ , մտիկ ըրէ իմ խօսքերս .  
Քու ականջներդ իմ խօսքերուս տուր :
- 21 Անոնք քու աչքերուդ առջևէն չերթան .  
Զանոնք քու սրտիդ մէջը պահէ .
- 22 Վասն զի զանոնք գտնողներուն՝ անոնք կեանք  
, են ,
- Եւ անոնց բոլոր մարմնոյն՝ բժշկութիւն :
- 23 Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ ,  
Քանզի կենաց աղբիւրները անկէ են :
- 24 Ծ ուռ բերանը քեզմէ մէկդի ըրէ ,  
Ու անիրաւ շրթունքները քեզմէ հեռացուր :
- 25 Քու աչքերդ ուղիղ նային ,  
Ու արտեանունքներդ շիտակ դէպ 'ի առջևդ  
ըլլան :
- 26 Ոտքերուդ շաւիղները շիտկէ ,  
Եւ քու բոլոր ճամբաներդ հաստատու նն :
- 27 Աջ կամ ձախ կողմը դի խոտորիր .  
Ոտքդ չարութենէ դարձուր :

## ԳԼ. Ե

- 1 Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ իմաստութեանս,  
Եւ քու ականջգ իմ հանձարիս տուր,
- 2 Որ խոհեմութիւն պահես,  
Ու քու շրթունքներդ գիտութիւն պահեն :
- 3 Վասն զի օտար կնկան շրթունքներէն խո-  
րիսիսի մեղը կը կաթի,  
Եւ անոր քիմքը եղէն կակուղ է.
- 4 Բայց անոր վախճանը օշինդրի պէս գառն՝  
Ու երկսայրի սուրի պէս սրած է:
- 5 Անոր ոտքերը մահուան կ'իջնեն,  
Ու անոր քայլերը դժոխքը կը հասնին :
- 6 Անոր ճամբաները փոփխական են, ու չեւ  
կրնար զնանտ գիտնալ,
- 7 Որ չըլլայ թէ կենաց ճամբան մտածես :
- 8 Եւ հիմա, ով որդիք, ինծի մտիկ ըրէք,  
Ու իմ բերնիս խօսքերէն մի խոտորիք :
- 9 Ան կնիկէն ճամբադ հեռացուր,  
Ու անոր տանը դրանը մի մօտենար .
- 10 Չըլլայ որ քու փառքդ ուրիշներու  
Եւ տարիներդ անողորմ մարդու տաս .
- 11 Չըլլայ որ օտարները քու զօրութինէդ կը-  
տանան :
- 12 Ու քու վաստակդ օտարներուն տունը մնայ .
- 13 Եւ քու վերջին ատենդ չհառաչես,  
Երբոր քու մարմինդ ու անդամներդ մաշին ,
- 14 Ու չըսես, Ես ի՞նչպէս խրատը ատեցի,  
Ու իմ սիրտս յանդիմանութիւնը անար-  
գեց .
- 15 Եւ իմ ցւոռուցիչներուս խօսքը մտիկ չըրի .
- 16 Ու իմ ականջս զիս վարժողներուն չտուի .
- 17 Ժողովքին ու ժողովուրդի մէջ  
Գրեթէ ամէն բէսակ թշուառութեան  
հանդիպեցայ :

- 15 Դուն քու ջրակոյտէդ ջուր խմէ ,  
Եւ քու ջրհորիդ մէջը վազով ջուրէն ,
- 16 Քու աղբիւրներդ գուրսը տարածուին ,  
Խոլու ջուրերու վտակները հրապարակնե-  
ռուն մէջ :
- 17 Անոնք մինակ քուկդ ըլլան ,  
Ու չէ թէ քուկդ և օտարներուն :
- 18 Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ .  
Եւ քու երիտասարդութեանդ կնկանը հետ  
ուրախ եղիր :
- 19 Անիկա +էու սիրելի եղնիկի ուես ,  
Եւ շնորհալի այծեման ուես ըլլայ .  
Ամէն ատեն անոր ստինքները քեզ կշտա-  
ցընեն ,
- Ու միշտ անոր սիրովը զմայլիս :
- 20 Եւ ինչո՞ւ , որդեակ իմ , դուն օտար կնկան  
մը սէրով զմայլիս ,
- Ու օտար կնկան ծոցը դրկես :
- 21 Վասն զի մարդուն ճամբաները Ցէրոջը աշ-  
քերուն առջեն են ,
- Ու անոր ամէն քայլերը ին+ը կը կշոէ :
- 22 Չարագործը իր անօրէնութիւնները պիտի  
բռնեն .
- Ու անիկա իր մնղքին չուաններովը պիտի  
բռնուի :
- 23 Անիկա առանց խրատի պիտի մեռնի ,  
Ու իր մեծ յիմարութեամբը պիտի մոլորի :

## ԳԼ. Ֆ

- 1 Որդեակ իմ , թէ որ քու բարեկամիդ հա-  
մար երաշխաւոր եղար ,
- Կամ օտար մարդու համար քո՞ ձեռքդ տուիր ,
- 2 Քու բերնիդ խօսքերովը որոգայթը ինկար ,  
Բերնիդ խօսքերովը բռնուեցար .

Յ Որդեակ իմ, շուտով ասանկ ըրէ որ աղատիս .

Որովհետեւ գուն քու բարեկամիդ ձեռքը  
մտար,

Գնա քու բարեկամիդ խոնարհէ  
Ու զանիկա թախանձէ :

4 Աչքերուդ քուն՝

Ու արտեանունքներուդ նիրհում մի տար .

5 Քեզ աղատէ ինչպէս որ այծեամը ուսորդին  
ձեռքէն .

Կամ թռչունը հաւորսին ձեռքէն լուսակ :

6 Ով ծոյլ, մրջիւնին գնա ,

Անոր ճամբաները տես ու իմաստուն եղիր .

7 Վասն զի անիկա նկւ իշխան ,

Ոստիկան, կամ տիրող չունի ,

8 Իր կերակուրը ամառունէ կը պատրաստէ ,

Իր ուտելիքը հունձքի ատեն կը ժողվէ :

9 Ով ծոյլ, մինչև մ'ըր կը պառկիս ,

Քունէդ ե՞րբ պիտի արթըննաս :

10 Քիչ մը քնանաս , քիչ մը նիրհէս ,

Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու  
համար .

11 Անատենը քու աղքատութիւնդ Ճամբորդի  
պէս պիտի զայ ,

Ու կարօտութիւնդ՝ սպառազինեալ մարդու  
պէս :

12 Անօրէն ու չար մարդը

Ծուռ բերնով կը շարժի .

13 Անիկա իր աչքերովը ակնարկութիւն կ'ընէ ,

Ոտքերովը կը խօսի ,

Ու մատերով բան կը սորվեցընէ .

14 Անոր սրտին մէջը ծոռութիւն կայ ,

Միշտ չարութիւն կը հնարէ ու կոիւներ կը  
հանէ :

- 15 Ասոր համար անոր կորուստը յանկարծ պիտի դայ .  
Անիկա յանկարծ պիտի կոտրուի , ու անոր դարման պիտի չգտնուի :
- 16 Տէրը աս վեց բանէն կը զգուի ,  
Ու անոր հոգւոյն տուջեր եօթը բան պիղծ է .
- 17 Ամրարտաւան աչքեր , ստախօս լեզու  
Եւ անմեղ արիւն թափող ձեռքեր ,
- 18 Չար խորհուրդներ հնարող սիրտ ,  
Չարութիւն ընելու համար շուտ վաղող  
ոտքեր ,
- 19 Ստութիւն խօսող անիրաւ վկայ  
Ու եղբարց մէջ կոխւներ ցանող հարդ :  
20 Որդեակ իմ , քու հօրդ պատուիրանքը պահէ ,  
Եւ քու մօրդ օրէնքը մի մերժեր :
- 21 Զանոնք միշտ քու սրտիդ վրայ կապէ ,  
Զանոնք քու պարանոցդ կախէ :
- 22 Քալած ատենդ անոնք քեզի առաջնորդու-  
թիւն ընան ,  
Քնացած ատենդ քեզ պահպանէն ,  
Ու արթընցած ատենդ քեզի հետ խօսակցին ,  
23 Քանդի պատուիրանքը ճրագ՝ ու օրէնքը լոյս է ,  
Եւ խրստին յանդիմանութիւնները կենաց  
Ճամբայ են .
- 24 Որ քեզ գէշ կնիկէն՝  
Օտար կնկան շողպորթող լեզուէն պահէ ,  
25 Սրնտիդ մէջ անոր գեղեցկութեանը մի ցան-  
կար .  
Եւ քեզ իր արտեանունքներով չբռնէ :
- 26 Վասն զի պոռնիկ կնկան պատճառա. ը  
Մարդ մինչեւ պատառ մը հայդ կարօտ կ'ուլայ .  
Եւ շնացող առնակինը պատուական հոգին  
կ'որսայ :
- 27 Հնար է որ մէկը իր ծոյը կրակ դնէ ,  
Ու հանդերձները չայրին .

- 28 Հնա՞ր է որ մէկը կրակի կայծերու վրայ քալէ  
Ու անոր ոտքերը չայրին :
- 29 Ասոր պէս է իր դրացիին կնկանը քովդա-  
ցողն ալ .
- Ով որ անոր դպչէ՝ անմեղ չըլլար :
- 30 Գողը թէ որ անօթութեան համար ու իր  
փորը կշտացընելու համար դողութիւն  
ընէ ,
- Չեն քամահրեր լանիս :**
- 31 Սակայն թէ որ գտնուի՝ Եօթնապատիկ կը  
հատուցանէ .
- Իր տանը բոլոր ինչքը կու տայ :
- 32 Կնկան հետ շնութիւն ընողին խելքը պա-  
կաս է .
- Աս բանը ընողը իր հոգին կը կորսընցընէ :
- 33 Անիկա վէրք ու անարդանք կը գտնէ ,  
Եւ անոր նախատինքը անջնջելի է :
- 34 Քանզի նախանձը էրկանը կատաղութիւնն է ,  
Ու անիկա վրէժինդրութեան օրը չխնայեր .
- 35 Անիկա ընաւ մէկ փրկունքի մը չնայիր ,  
Կաշառք ալ շատցընելու ըլլաս՝ անիկա չհա-  
ճիր :

**ԳԼ. Է**

- 1 Որդեակ իմ , պահէ իմ խօսքերս ,  
Ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ :
- 2 Իմ պատուիրանքներս պահէ որ ապրիս ,  
Ու իմ օրէնքիս քու աչքերուդ բերին աէս  
նայէ :
- 3 Զանոնք մատերուդ վրայ կապէ ,  
Զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ :
- 4 Դմաստութան ըսէ , Դուն իմ քոյրս ես .  
Ու իոհեմութեան՝ Ծանօթ կանչէ ,
- 5 Որ քեզ օտար կնիկէն՝

- Եղովորթութեամբ խօսող օտար կնիկէն  
պահէն :
- 6 Վասն զի իմ տանս պատուհանէն՝  
իմ վանդակէս նայեցայ .
- 7 Եւ անմիտներուն մէջը տեսայ ,  
Երիտասարդներուն մէջը պակասամիտ պա-  
տանի մը գտայ ,
- 8 Որ փողոցին մէջ ան կնոջը դանը անկիւնին  
քովէն կ'անցնէր ,
- Ու անոր տանը ճամբան բռնեց ,
- 9 Երբոր իրիկուն եղաւ , օրը տարաժամեցաւ  
Ու գիշերուան մութը տիրեց .
- 10 Եւ ահա անոր առջելը կնիկ մը ելաւ .  
Անիկա պոռնիկի կերպարանք ու նենդաւոր  
սիրոտ մը ունէր .
- 11 Անիկա աղաղակող ու անզդամ էր ,  
Ու անոր ոտքերը իր տանը մէջ չէր կենար .
- 12 Երբեմն դուրսը , երբեմն հրապարակները ,  
Եւ ամէն անկիւնի քով դարանամուտ կ'ըլ-  
լար .
- 13 Զանիկա բռնեց համբուրեց ,  
Ու լիրը երեսով անոր ըստաւ ,
- 14 Իմ քովս խաղաղութեան զոհեր կան .  
Ես այսօր իմ ուխտերս կատարեցի .
- 15 Անոր համար ելայ քեզ դիմաւորելու ,  
Քու երեսդ փնտռելու , ու քեզ գտայ :
- 16 Դմ անկողինս ծածկոցներով զարդարեր  
Եմ .
- Եգիպտոսի ծաղկանկար բեհեշով .
- 17 Անկողինիս վրայ զմուռս ,  
Հալուէ ու կինամոն ցաներ Եմ .
- 18 Եկուր մինչև առտու սիրով զուարճա-  
նանք ,
- Ու ցանկութիւններով զրօսնունք .
- 19 Վասն զի երիկս տունը չէ ,

- Անիկա հեռու ճամբայ գնաց .  
 20 Ստակին քսակը իր հետը առաւ ,  
 Եւ լուսնի լրման օրը իր տունը պիտի  
 դառնայ :
- 21 Այսպէս իր շատ խօսքերովը զանիկա հրա-  
 պուրեց ,  
 Ու իր շրթունքներուն շողոքորթութիւնովը  
 զանիկա ստիպեց :
- 22 Ան ու շիտակ կնկանը ետևէն՝  
 Սպանդանոցը գացող արջառի պէս՝  
 Պատժուելու հացող կապուած յիմարի մը  
 պէս կ'երթայ ,
- 23 Մինչև որ նետը անոր լեարդը ծակէ .  
 Ինչպէս որ թռչուն մը արտորալով դէպ 'ի  
 ծուղակը կ'երթայ ,  
 Ու չդիտեր որ անիկա իր հոգւոյն համար  
 լորուածէ :
- 24 Եւ հիմա , ով որդիք , ինձի մտիկ ըրէք ,  
 Ու իմ բերնիս խօսքերուն ականջ դրէք :  
 25 Քու սիրտդ անոր ճամբաներուն չխոտորի ,  
 Եւ անոր շաւիղներուն մէջը չմոլորիս .  
 26 Վասն զի անիկա շատերը խոցոտեց ու կոր-  
 ծանեց ,  
 Ու անոր բոլոր մեռցուցած մարդիկը զօրա-  
 ւոր էին :
- 27 Անոր տունը դժոխքին ճամբաներն է ,  
 Անոնք մսհուան շտեմարանները կ'իջնեն :

ԳԼ. Բ

- 1 Ահա իմաստութիւնը կը կանչէ ,  
 Ու խոհեմութիւնը իր ծայնը կու տայ :  
 2 Անիկա բազմը տեղերու գլուխ , ճամբու  
 վրայ  
 Եւ շաւիղներու մէջ կը կայնի :

- 3 Անիկա դռներուն քովը՝ քաղաքներուն բերանը
- Ու դռներուն մուտքը աղաղակելով է շոէ,
- 4 Ով մարդիկ, ձեզի կը կանչեմ.
- Եւ իմ ձայնս մարդոց որդիներուն է :
- 5 Ով տգէտներ, իմաստութիւն սորվեցէք.
- Ով անմիտներ, իմացող սիրտ ունեցէք,
- 6 Լսեցէք, վասն զի ազնիւ բաներ պիտի խօսիմ,
- Ու իմ շրթունքս պիտի բանամ ուղեղ բաներ խօսելս համար :
- 7 Քանզի իմ քիմքս ծշմարտութիւն պիտի խօսի
- Բայց իմ շրթունքս ամբարշտութենէ կը զզուի :
- 8 Բերնիս բոլոր խօսքերը արդարութեամբ են,
- Եւ անոնց մէջը խոտորնակ ու ծուռ բան չկայ :
- 9 Ամէնն ալ հասկըցողին ուղիղ են,
- Ու դիտութիւն դտնողներուն շիտակ են :
- 10 Իմ խրատս առէք, և ոչ թէ արծաթ .
- Ու ընտիր ոսկին աւելի դիտութիւնը սէրեցէ:
- 11 Վասն զի իմաստութիւնը գոհարներէն աղէկ է .
- Եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հաւասարիլ :
- 12 Ես իմաստութիւնս սրամութեան հետ կը բնակիմ,
- Եւ ճարտարութեանց գրտութիւնը կը դրտնեմ :
- 13 Տէրոջը վախը չարութիւնը ատելն է .
- Ես հպարտութիւնը, ամբարժաւանութիւնը, չար ճամբան
- Ու նենգաւոր բերանը չ'ատեմ.
- 14 Խորհուրդը և խոհականութիւնը իմն է .

- Ես եմ հանճարը՝ ու զօրութիւնը իմն է :  
 15 Թագաւորները ինձմով կը թագաւորեն ,  
     Ու նախարարները չնշանակ արդարութեան  
         կանոններ կը դնեն :
- 16 Ինձմով կ'իշխեն իշխանները ,  
     Ազնուականները ու երկրիս բոլոր դատա-  
         ւորները :
- 17 Ես կը սիրեմ զիս սիրողները ,  
     Եւ զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն :
- 18 Իմ քովս հարստութիւն ու փառք ,  
     Ընտիր ստացուածք և արդարութիւն կայ :
- 19 Իմ պտուղս ոսկիէն ու մաքուր ոսկիէն ,  
     Եւ իմ արդիւնքս ընտիր արծաթէն աղէկ է :
- 20 Ես արդարութեան ճամբուն մէջ՝  
     Իրաւանց շաւիղներուն մէջ կը քալեմ ,
- 21 Որ զիս սիրողներուն ստացուածք ժառան-  
         գեցընեմ .
- Ու անոնց դանձերը պիտի լեցընեմ :
- 22 Տէրը իր ճամբուն սկիզբ՝  
     Իր վաղեմի գործքերէն առաջ զիս ստացեր  
         էր :
- 23 Ես յառաջմանէ՝  
     Երկրիս սկիզբէն առաջ օծուեցայ :
- 24 Անդունդները չեղած՝  
     Առատ ջուրերուն աղբիւրները չեղած ես ծը-  
         նած էի :
- 25 Լեռները չտեղաւորուած՝  
     Բլուրներէն առաջ ես ծնած էի :
- 26 Տակաւին երկիրը ու բաց տեղուանքը  
     Եւ աշխարհիս հողերուն առջինը չստեղծած ,
- 27 Երբոր երկինքները կը պատրաստէր .  
     Ու անդնդոց երեսին վրայ կամար կը ձգէր ,  
         Ես հոռ էի :
- 28 Երբոր վերի ամենքը կ'ուժովցընէր ,  
     Եւ անդնդոց աղբիւրները կը հաստատէր .

- 29 Երբոր ծովուն կանոն կը դնէր ,  
Ու ջուրերը իր հրամանէն դուրս չելեն ,  
Ու երբոր երկրիս հիմերը կը ձգէր ,
- 30 Անատենը ես անոր քովը ճարտարապետ էի ,  
Եւ ամէն օր անոր զուարձութիւնն էի ,  
Ու միշտ անոր առջեր կ'ուրախանայի :
- 31 Ես աշխարհիս մէջ անոր երկրին վրայ  
կ'ուրախանայի ,  
Ու իմ զուարձութիւնս մարդոց որդիներուն  
հետ էր :
- 32 Եւ հիմա , ով որդիք , ինծի մտիկ ըրէք .  
Վասն զի իմ ճամբաներս պահողները երջա-  
նիկ կ'ըլլան :
- 33 Խրատ մտիկ ըրէք ու իմաստուն եղէք ,  
Ու շնորհու մի մերժէք :
- 34 Երանի ան մարդուն՝ որ ինծի մտիկ կ'ընէ ,  
Ամէն օր իմ դռներուա քովը կը հսկէ ,  
Եւ իմ դրանդիբներս կը դիտէ :
- 35 Ինչու որ զիս գտնողը կեանք կը գտնէ ,  
Ու Ցէրոջմէ շնորհք կը ստանայ :
- 36 Բայց ինծի դէմ մեղանչողը իր հոգւոյն ա-  
նիրաւութիւն կ'ընէ .  
Բո՞լոր-զիս ատողները մահը կը սիրեն :

## ԳԼ. Թ

- 1 Խրաստութիւնը իր տունը շինեց ,  
Ու իր եօթը սիւները կանգնեց .
- 2 Իր անասունները մորթնց , իր ոինին խառ-  
նեց
- Ու իր սեղանը պատրաստեց :  
3 Անիկա իր աղախինները խրկեց ,  
Ու քաղաքին բարձր տերը ու վրուն վրայ կը  
կանչէ .
- 4 Ով որ պարզամիտ է՝ թող հոս դայ .

- Ու պակասամիտ եղողին կ'ըսէ ,  
 5 Եկէք իմ հացէս կերէք ,  
 Ու խառնած գինիէս խմեցէք .  
 6 Յիմարութիւնը թողուցէք՝ որ ապրիք ,  
 Ու խոհեմութեան ճամբուն մէջ քալե-  
 ցէք :  
 7 Ծաղը ընողը յանդիմանողը իրեն անար-  
 դանք՝  
 Ու ամբարիշուր խրատողը իրեն արտա կը  
 վաստըկի :
- 8 Ծաղը ընողը մի յանդիմաներ , որ չըլլայ  
 թէ քեզի թշնամի ըլլայ .  
 Իմաստունը յանդիմանէ , ու քեզ պիտի սիրէ  
 9 Իմաստունին իրու տուր , և աւելի իմաս-  
 տուն պիտի ըլլայ .
- Արդար մարդուն սորվեցուր , ու էր իմաս-  
 տութիւնը պիտի աւելլընէ :
- 10 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է ,  
 Ու Ամենասուրբին գիտութիւնը հանձար է :  
 11 Վասն զի քու օրերդ ինծմով պիտի շատնան ,  
 Եւ քեզի կենաց տարիներ պիտի սաւելնան :  
 12 Թէ որ իմաստուն ես , քեզի իմաստուն ես ,  
 Ու թէ որ ծաղը ընող ես , անոր պատիժը մի-  
 նակ դուն պիտի կրես :
- 13 Անզգամ կնիկը աղաղակող կ'ըլլայ .  
 Անիկա անմիտ է ու բան մը չգիտեր :  
 14 Եւ քաղաքին բարձր տեղուանքը՝  
 Իր տանը դուռը աթոռի վրայ կը նստի ,  
 15 Որ իրենց ճամբան շիտակ դացող  
 Անցաւորները կանչէ ,  
 16 Ով որ պարզամիտ է՝ թող հոս գայ .  
 Ու պակասամիտ եղողին կ'ըսէ ,  
 17 Գողթուած ջուրերը անոյշ են ,  
 Եւ գաղտուկ հացը համով կ'ըլլայ :

18 Բայց անիկա չգիտեր որ ան տեղը մեռելներ  
կան,  
Ու անոր հրաւիրած մարդիկը դժոխքին ան-  
դունդներուն մէջն են :

## ԳԼ. Ժ

Սողոմոնին առակները :

- 1 Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացընէ .  
Բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է :
- 2 Անօրէնութեան դանձերը օգուտ չեն ըներ .  
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ :
- 3 Տէրը արդարին հողին անօթի չժողուր .  
Բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը  
խափանէ :
- 4 Ծովլ ձեռքով բանողը աղքատ կ'ըլլայ ,  
Բայց ժիր մարդոց ձեռքը հարստութիւն կը  
բերէ :
- 5 Ան որ ամառը կը ժողվէ՝ խոհեմ տղայ է .  
Հունձքի ատեն քնացողը ամօթոյ պաաճառ  
եղող տղայ է :
- 6 Արդարին գլխուն վրայ օրհնութիւններ կան.  
Բայց բդնութիւնը ամբարիշտներուն բերանը  
կը դոցէ :
- 7 Արդարներուն յիշատակը օրհնեալ կ'ըլլայ .  
Բայց ամբարիշտներուն անունը կը փտի :
- 8 Իմաստուն սիրտ ունեցողը պատուիրանքնե-  
րը կը բռնէ .  
Բայց յիմար շրթունք ուսեցողը կը կործանի :
- 9 Կատարելութեամբ քալողը ապահ վլու-  
թեամբ կը քալէ .  
Բայց իր ճամբաները ծռողը պիտի ճանչ-  
ցուի :
- 10 Աչքով ակնարկութիւն ընողը նեղութիւն  
կու տայ .

- Ու յիմար շրթունք ունեցողը կը կործանի :
- 11 Արդարին բերանը կենաց աղքիւր է .  
Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բերա-  
նը կը գոցէ :
- 12 Ատելութիւնը կոխւներ կը հանէ .  
Բայց սէրը ամէն յանցանքները կը ծածկէ :
- 13 Իմաստունին շրթանցը վրայ իմաստութիւն  
կը դտնուի .  
Բայց պակասամիտ եղողին կոնակին համար  
դաւազան ուեր + է :
- 14 Իմաստունները դիտութիւն կը դանձեն .  
Բայց յիմարին բերանը կործանման մօտ է :
- 15 Հարուստին ճոխութիւնը իր ամուր քա-  
ղաքն է .  
Բայց տնանկներուն աղքատութիւնը իրենց  
կործանումն է :
- 16 Արդարին գործը կենաց համար է .  
Իով ամբարչտին արդիւնքը մեղաց համար է :
- 17 Խրատ պահողը կենաց ճամբուն մէջ է .  
Բայց յանդիմանութիւնը մերժողը կը մո-  
լորի :
- 18 Ատելութիւնը ծածկողը ստախօս շրթունք  
ունի ,
- Ու բամբասանք հանողը անմիտ է :
- 19 Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ .  
Բայց իր շրթունքները զսպողը խելացի է :
- 20 Արդարին լեզուն ընտիր արծաթ է .  
Ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի :
- 21 Արդարին շրթունքները շատերուն առաջ-  
նորդութիւն կ'ընեն .  
Բայց յիմարները խելքի պակառութենէն կը  
մոռնին :
- 22 Տէրոջը օրինութիւնն է որ հարստութիւն  
կու տայ ,
- Ու անոր հետ տրտմութիւն չխառներ :

23 Զարութիւն ընելը յիմարին զբօսանկըն է .  
Բայց խոհեմ մարդուն՝ իմաստութիւնը ,  
24 Զար մարդուն վախցած բանը իր վըայ կու  
գայ .

Բայց արդարներուն փափաղը կը լեցուի :  
25 Մրրիկը անցնելուն պէս ամբարիշտը ընա-  
ջնջ կ'ըլլայ .

Բայց արդարը յաւիտենական հիմ ունէ :  
26 Ինչպէս է քացախը ակռաներուն , և ծուխը  
աչքերուն ,

Ծոյլն աւ զինքը խրկողներուն այնպէս է :  
27 Տէրոջը վախը օրեր կ'աւելցընէ .

Բայց ամբարիշտներուն տարիները պիտի  
կարձընան :

28 Արդարներուն յոյալը ուրախութիւն է .  
Բայց ամբարիշտներուն ակնկալութիւնը պի-  
տի կորսուի :

29 Տէրոջը ճամբան արդարին զօրութիւն է .  
Բայց անօրէնութիւն գործողներուն կործա-  
նում է :

30 Արդարը պիտի չսասանի յաւիտեան .  
Բայց ամբարիշտները երկրի վըայ պիտի չը-  
բնակին :

31 Արդարին բերանը իմաստութիւն կը բղիսէ .  
Բայց նենդաւոր լեզուն պիտի կտրուի :

32 Արդարին շրթունքները հաճոյ բանը գիտեն ,  
Բայց ամբարիշտներուն բերանը՝ մեյն նեն-  
գութիւն :

### ԳԼ. ԺԱ

1 Նենգութեան կշեռքը Տէրոջը առջնը պիղծ  
է .

Բայց ուղեղ իւնուի քարը ամոր հաճոյ ։  
2 Երբոր հպարտութիւնց գայ , անարգութիւնն  
աւ կու գայ .

- Բայց իմաստութիւնը խոնարհներուն հետ է։  
 3 Ուղիղներուն շիտակութիւնը անոնց առաջ-  
 նորդութիւն կ'ընէ։
- Բայց անօրէններուն ծոռութիւնը զանոնք  
 բնաջինջ կ'ընէ։
- 4 Բարկութեան օրը հարստութիւնը օդուտ  
 մը չըներ։
- Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ։  
 5 Կատարեալներուն արդարութիւնը անոնց  
 ճամբան կը չիտկէ։
- Բայց անիրաւը իր անիրաւութեամբը կ'իյ-  
 նայ։
- 6 Ուղիղներուն արդարութիւնը զանոնք կ'ա-  
 զատէ։
- Բայց անօրէնները իրենց չարութեանը մէջ  
 կը բռնուին։
- 7 Երբոր չար մարդը մեռնի, անոր ակնկալու-  
 թիւնը կը կորսուի։
- Եւ անօրէններուն յոյսը կը կորսուի։
- 8 Արդարը նեղութենէ կ'ազատի,
- Ու անոր տեղը ամբարիշտը կ'երթայ։
- 9 Կեղծաւորը բերնովը իր դրացին կը կորսըն-  
 ցընէ։
- Բայց արդարները գիտութեամբ կ'ազատին։
- 10 Արդարներուն յաջողութեանը վրայ քաղա-  
 քը կ'ուրախանայ։
- Ու երբոր չարերը կորսուին, ցնծութեան  
 ձայն էւ լուսէ։
- 11 Ուղիղներուն օրհնութիւնովը քաղաքը կը  
 բարձրանայ։
- Բայց ամբարիշտներուն բերնովը կը կործանի։
- 12 Պակասամիտ եղողը իր դրացին կ'արհամարհէ։
- Բայց խոհեմարդը կը լուէ։
- 13 Բանսարկութեան զտըտողը գաղտնիքը կը  
 յայտնէ։

Բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ :

14 Ճողովուրդը առանց խոհականութեան կը կործանի .

Բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ :

15 Օտարականին երաշխաւոր եղողը անշուշտ չարեւը կը հանդիպի .

Բայց երաշխաւորութիւնը ատողը ապահով է :

16 Շնորհալի կնիկը պատիւ կը ստանայ .

Եւ զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան :

17 Ողորմած մարդը իր անձին աղեկութիւն կ'ընէ .

Բայց անողորմ մարդը իր մարմնոյն նեղութիւն կուտայ :

18 Զար մարդը սնոտի գործ կը գործէ .

Բայց արդարութիւն ցանողը ապահով վարձք կ'ունենայ :

19 Ինչպէս որ արդարութիւնը կենաց իտուլնորդէ ,

Սոյնաւէս ալ չարութեան հետևողը իր մահուանը ի՞երեայ :

20 Ծոուռ սիրտ ունեցողները Տէրոջը առջել պիղծ են .

Բայց ուղիղ ճամբայ քալողները անոր հաճոյ են :

21 Անօրէնները լիւ ձեռք ձեռքի ուալով մէտունին , անպատիժ պիտի չմնան .

Բայց արդարներուն սերունդը պիտի աղատի :

22 Գեղեցիկ կնիկը որ խոհեմութիւն չունի , խոզին քիթը ուրուած ոսկի Տղակին իշնանի :

23 Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է .

- Բայց անօրէններուն ակնկալութիւնը բար-  
կութիւն պիտի ըլլայ :
- 24 Մուրտ կայ որ էր սրացուածութել ցրուելով կ'ա-  
ւելցընէ ,
- Ու մուրտ ի՞ոյ ո՞յ չափէ դուրս կը խնայէ , բայց  
կարօտութեան էլ հասնէ :
- 25 Բարերար անձը պիտի դիրնայ .
- Եւ ան որ կ'ոռողէ՝ ինքն ալ պիտի ոռոգուի :
- 26 Ցորէնը պահողին՝ ժողովուրդը անէծք կու  
տայ .
- Բայց զանիկա ծախողին դլխուն վրայ օրհ-  
նութիւն կ'ըլլայ :
- 27 Աղէկութեան համար փոյթ ունեցողը շը-  
նորհք կը ստանայ .
- Բայց ով որ գէշութիւն կը փնտոէ , անիկա  
իրեն պիտի հանդիպի :
- 28 Իր հարստութեանը վրայ յոյսը դնողը պի-  
տի իյնայ .
- Բայց արդարները կանանչ տերեկի պէս պի-  
տի ծաղկին :
- 29 Իր տանը նեղութիւն տուողը հով պիտի  
ժառանգէ .
- Ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծա-  
ռայ պիտի ըլլայ :
- 30 Արդարին պտուղը կենաց ծառ է .
- Եւ հոգիները վաստըկողը իմաստուն է :
- 31 Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կըէ .
- Ո՞ւր մնաց ամբարիշոը ու մեղաւորը :

ԳԼ. ԺԲ

- 1 Խրատը սիցողը դիտութիւնը կը սիրէ .
- Ու յանդիմանութիւնը ատողը անմիտ է :
- 2 Բարի մարդէ Տէրոջմէ շնորհք կը ստանայ .
- Բայց Աստուած նանդաւոր մարդը պիտի դա-  
տապարտէ :

3 Մարդը անիրաւութեամբ հաստատութիւն  
չունենար .

Բայց արդարներուն արմատը չշարժիր :

4 Առաքինի կնիկը իր էրկանը պսակ է .

Բայց նախատինք բերողը անոր ոսկորներուն  
մէջի փտութեանը պէս է :

5 Արդարներուն մոածութիւնները իրաւունք  
են .

Բայց ամբարիշտներուն խորհուրդները նեն-  
գութիւն են :

6 Ամբարիշտներուն խօպերը արիւնի համար  
դարան են .

Բայց ուղիղներուն բերանը զիրենք կ'ազատէ :

7 Ամբարիշտները կը կործանին ու բնաջինջ  
կ'ըլլան .

Բայց արդարներուն տունը կը հաստատուի :

8 Մարդը իր խոհեմութեանը չափ կը գովուի .

Բայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարդուի :

9 Աննշան մարդը՝ որ ծառայ ունի ,  
Զինքը մեծցընող ու հացի կարօտ եղողէն  
աղէկ է :

10 Արդարը իր անասուններուն կենացը համար  
հոգ կը տանի .

Բայց ամբարիշտներուն աղիքները անողորմ  
են :

11 Իր երկիրը դործողը հացով կը կշամնայ .

Բայց դատարկ մարդոց հետեղը պակասա-  
միտ է :

12 Ամբարիշտը չարերուն առարին կը փափաքի .

Բայց արդարներուն արմատը պառակու կու . տայ :

13 Չարը իր շրթունքներուն յանդանքովը որո-  
գայթը կ'իյնայ .

Բայց արդարը նեղութենէն կ'ելլէ :

14 Մարդը իր բերնին պառուղէն բարիքներով  
կը լեցուի .

- Ու մարդուն ձեռաց հատուցումը իրեն պիտի դառնայ :
- 15 Յիմարին ճամբան իր աչքերուն շխտակ է .  
Բայց խրատ մտիկ ընողը իմաստուն է :
- 16 Յիմարը նոյն օրը կը յայտնէ իր բարկութիւնը .  
Բայց անարդանքը ծածկողը խելացի է :
- 17 Ճշմարտութիւն խօսողը արդարութիւն կը յայտնէ .  
Խակ սուտ վկան՝ նենդութիւն :
- 18 Մարդի կան՝ որ իրենց շատախօսութեամբը  
սուրի պէս կը խոցուտեն .  
Բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է :
- 19 Ճշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ .  
Բայց ստախօս լեզուն վայրկենական է :
- 20 Չարութիւն մտածողին սրտին մէջը նենդութիւն կ'ըլլայ .  
Բայց խաղաղութեան համար խորհուրդ ընողները ուրախութիւն կ'ունենան :
- 21 Արդարին բնաւ չարիք չհասնիր .  
Բայց ամբարիշտները թշուառութիւններով կը լեցուին :
- 22 Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է .  
Բայց հաւատարմութիւն ընողները անոր հաճոյ են :
- 23 Խոհեմ մարդը էր գիտցածը կը ծածկէ .  
Բայց յիմարներուն սիրտը յիմարութիւն կը հրատարակէ :
- 24 Ֆիր մարդոց ձեռքը կ'իշխէ ,  
Ու ծոյլը հարկատու կ'ըլլայ :
- 25 Մարդուն սրտին մէջ եղող վիշտը զանիկա կը ճնշէ .  
Բայց աղեկ խօսքը կ'ուրախացընէ զանիկա :

- 26 Արդարը իր ընկերին ճամբայ կը ցուցընէ .  
Բայց ամբարիշտներուն ճամբան զիրենք կը  
մոլորցընէ :
- 27 Ծոյլը իր որսը չեփեր .  
Բայց ժիր մարդուն ստացուածքը պատուա-  
կան է :
- 28 Արդարութեան ճամբուն մէջ կեանք կայ .  
Եւ անոր շաւիղներուն ճամբուն մէջ մահ  
չկայ :

## ԳԼ. ԺԳ

- 1 Խմաստուն տղան իր հօրը խրատը բրի է լ'ընէ .  
Բայց ծաղը ընողը յանդիմանութիւնը մտիկ  
չըներ :
- 2 Մարդը իր բերնին պտուղէն բարութիւն  
կ'ուտէ ,  
Բայց անօրէններուն հոգին՝ բռնութիւն .
- 3 Իր բերանը զսպողը իր անձը կը պահէ .  
Բայց շրթունքները լայն բացողը պիտի կոր-  
ուտի :
- 4 Ծոյլին հոգին կը ցանկայ ու բան մը չունի .  
Բայց ժրաջան մարդոց հոգին կը գիրնայ :  
Սուտ խօսքը արդարին ատելի է .  
Բայց ամբարիշոը ամօթալից ու խայտա-  
ռակ վարք ունի :
- 6 Արդարութիւնը կատարելութեամբ քալող-  
ները կը պաշտպանէ .  
Բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ :  
7 Կան որ զիրենք հարուսն կը ցուցընեն ու բան  
մը չունին ,  
Եւ իան որ զիրենք աղքատ կը ցուցընեն ու  
շատ հարստութիւն ունին :
- 8 Մարդուն կենացը փրկանքը իր հարնտու-  
թիւնն է .

- Բայց աղքատը յանդիմանութիւն չլտեր :  
 9 Արդարներուն լոյսը զուարթ պիտի ըլլայ .  
 Բայց ամբարիշտներուն ճրադը պիտի մարի :  
 10 Եիրաւի հպարտութենէ կոխւ կը ծաղի .  
 Բայց խրատ մտիկ ընողներուն քովը իմաս-  
     տութիւն կայ :  
 11 Անիրաւութեամբ ժողվաւած հարստութիւնը  
     պիտի պակսի .  
 Բայց էր աշխատութեամբը ժողվողը պիտի  
     շոտցընէ :  
 12 Ուշոցած յոյսը սիրտը կը հիւանդացընէ .  
 Բայց փափաքին հասնիլը կենաց ծառ մըն է :  
 13 Խօսքը արհամարհողը պիտի կորսուի .  
 Բայց պատուիրանքէն վախցողը վարձք պի-  
     տի առնէ :  
 14 Իմաստունին օրէնքը կենաց աղբիւր է  
     Մահուան որոգայթներէն ազատ մնալու  
     համտր :  
 15 Բարի խոհեմութիւնը շնորհք կու տայ .  
 Բայց անօրէններուն ճամբան դժուարին է :  
 16 Ամէն խելացի իմաստութեամբ կը դործէ .  
 Բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ :  
 17 Չար պատղամաւորը թշուառութեան մէջ  
     կ'իյնայ .  
 Բայց հաւատարիմ դեսպանը բժշկու-  
     թիւն է :  
 18 Խրատ անարգողը աղքատութիւն ու Փնար-  
     գութիւն չէ չէ :  
 Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը պա-  
     տիւ կը դտնէ :  
 19 Փափագին կատարուիլը հոգիին անոյշ է .  
     Ու չտրագործութենէ ետ կենալը յիմարնե-  
     րուն զգուելի է :  
 20 Իմաստուններուն Շետ քալողը իմաստուն  
     կ'ըլլայ .

- Բայց անմիտներուն հետ ընկերացողը շար  
կ'ըլլայ :
- 21 Մեղաւորներուն ետեւէն ձախորդութիւն  
կ'երթայ .
- Բայց արդարներուն ըարիք կը հատուցուի :
- 22 Բարի մարդը իր որդւոցը որդիներուն ժա-  
ռանգութիւն կը թողու .
- Բայց մեղաւորին ստացուածքը արդարին  
համար կը պահուի :
- 23 Աղքատներուն մշակած երկրին մէջը շատ  
ուտելիք կայ .
- Բայց Տուրու կայ որ անիրաւութենէ կը կոր-  
սուի :
- 24 Գաւաղանին խնայողը իր որդին կ'ատէ .
- Բայց զանիկա սիրողը կանուխկեկ կը խը-  
րատէ :
- 25 Արդարը մինչև իր անձին կշտանալը կ'ուտէ .
- Բայց ամբարիշտներուն փորը կարօտութիւն  
պիտի քաշէ :

## ԳԼ. ԺԴ.

- 1 Խմաստուն կնիկները իրենց տունը կը շինեն .
- Բայց յիմար կնիկը զանիկա իր ձեռքովը կը  
փլցընէ :
- 2 Իր ուղղութեանը մէջ քալողը Տէրոջմէ կը  
վախնայ .
- Բայց ծուռ ճամբայ ունեցողը զանիկա կ'ա-  
նարդէ :
- 3 Յիմարին բերանը հպարտութեան դաւազան  
կայ .
- Բայց յիմաստուններուն շրմունքները զերենք  
կը պահեն :
- 4 Ուր որ արջառ չկայ՞ մսուրը մաքուր կը  
մնայ .

- Իսկ արդիւնքին առատութիւնը եղին զօրութենէն առաջ կու գայ :
- 5 Ճշմարտութեան վկան սուտ չխօսիր .  
Բայց անիրաւ վկան ստութիւններ կը թափէ բերնէն :
- 6 Ծաղր ընողը իմաստութիւն կը փնտոէ ու չգտներ .  
Բայց իմաստուններուն համար գիտութիւնը գիւրին է :
- 7 Յիմար մարդէն հեռացիր ,  
Երբոր կ'իմանաս որ իմաստուն շրթունքներ չունի :
- 8 Խելացի մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկընալն է .  
Բայց յիմարներուն անմտութիւնը նենդութիւն է :
- 9 Յիմարները յանցանքը ծաղր կ'ընեն .  
Բայց ուղիղներուն մէջը ներողամտութիւն կայ :
- 10 Մարդուն սիրտը իր հողիին ցաւը կը ճանչնայ .  
Ու անոր ուրախութեանը ուրիշը մասնակից չըլլար :
- 11 Ամբարիշտներուն տունը պիտի կործանի .  
Բայց ուղիղներուն վրանը պիտի ծաղկի :
- 12 Ճամշայ կայ որ մարդուն շիտակ կ'երևնայ ,  
Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է :
- 13 Ծիծաղելու ատենն ալ մարդուն սիրտը տըրտմութիւն կը զգայ ,  
Եւ ուրախութեան վախճանը սուդ կ'ըլլայ :
- 14 Ապականած սիրտը իր ճամբաներէն՝  
Ու բարի մարդը ինքիրմէն պիտի կշտանայ :
- 15 Միամիտ մարդը մէն խօսքի կը հաւատայ .  
Բայց խելացին իր քայլերը կը քննէ :

- 16 Իմաստունը կը վախնայ ու չարութենէ կը փախչի .  
 Բայց անմիտը կը հպարտանայ ու յանձնապատան կ'ըլլայ :
- 17 Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ .  
 Ու նենգամիտ մարդը ատելի է :
- 18 Անխոհեմները անմտութիւն կը ժառանգեն .  
 Բայց խելացիները զիտութեամբ կը պսակուին :
- 19 Զարերը բարիներուն առջեը կը խոնարհին ,  
 Եւ ամբարիշտները՝ արդարներուն դրանը քովը
- 20 Աղքատը մինչև անդամ իր ընկերին ատելի է .  
 Բայց հարուստին բարեկամները շատ են :
- 21 Իր ընկերը անարդողը մեղք կը դործէ .  
 Բայց աղքատին ողօրմութիւն ընողը երանելի կ'ըլլայ :
- 22 Ահա չարութիւն մտածողները կը մոլորին .  
 Բայց բարութիւն մտածողներուն ողորմութիւն ու ճշմարտութիւն կ'ըլլայ :
- 23 Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ .  
 Բայց դատարկաբանութիւնը միայն կատութեան է տանէ բարեւ :
- 24 Իմաստուններուն հարստութիւնը իրենց պըսակն է .  
 Բայց անմիտներուն բարձրութիւնը յիմարութիւն է :
- 25 Հաւատարիմ վկան հոդիներ կ'ազատէ .  
 Բայց խարդախը ստութիւններ դուրս կրւտայ :
- 26 Յերոջը վախին մէջ հաստատ վստահութիւն կայ .  
 Ու անոր որդիքը ապաւէն պիտի ունենան :
- 27 Յերոջը վախը կենաց աղբիւջ է  
 Մահուան որոգայթներն ազատ մնալու համար :

- 28 Ժողովուրդին բազմութիւնը թագաւորին պատիւն է .  
Բայց ժողովուրդին նուազութիւնը իշխանին կործանումն է :
- 29 Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է .  
Իսկ կարձամիտը շատ յիմարութիւն կ'ընէ :
- 30 Հանդարտ սիրտը մարմնոյն կեանք է .  
Բայց նախանձը ոսկորներուն փտութիւն է ,
- 31 Աղքատին զրկանք ընողը անոր Ստեղծիչը կ'անարդէ .  
Բայց տնանկին ողորմութիւն ընողը զԱնիկա կը պատուի :
- 32 Ամրարիշտը իր չարութեանը համար կը վորնտուի .  
Բայց արդարը իր մահուան ատենը ապաւէն կ'ունենայ :
- 33 Խելացի մարդուն սրտին մէջ իմաստութիւն կը հանդչի .  
Իսկ յիմարներուն ներսը եղածը կը ճանցուի :
- 34 Արդարութիւնը ազդը կը բարձրացընէ .  
Բայց մեղքը ժողովուրդներուն անարդանք է ,
- 35 Խոհեմ ծառային՝ թագաւորը կը հաճի .  
Բայց նախատինք բերող ծառային՝ կը բարկանայ :

ԳԼ. ԺԵ

- 1 Մեղմ պատասխանը սրտմտութիւնը կ'իջեցընէ .  
Բայց խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ :
- 2 Իմաստուններուն լեզուն զիտութիւնը հաճոյ կ'երևցընէ .  
Բայց անմիտներուն բերանը յիմարութիւն կը բղիւէ :
- 3 Տերոջը աչքերը ամեն տեղ Զարերը ու բարիները կը դիտեն :

- 4 Խաղաղասէր լեզուն կենաց ծառ է .  
Բայց խոռվարար լւշտն սիրտ կը կոտրէ :  
5 Յիմարը իր հօրը խրատը կ'անարդէ .  
Բայց յանդիմանութեան հնազանդողը խելացի կ'ըլլայ :  
6 Արդարին տունը մեծ գանձ կայ .  
Բայց ամբարշտին և կամուտներուն մէջը խը-  
ռովութիւն կայ :  
7 Իմաստուններուն շրթունքները դիտութիւն  
կը տարածեն .  
Բայց յիմարներուն սիրտը այնպէս չէ :  
8 Ամբարիշտներուն զոհը Տէրոջը առջելը պիղծ  
է .  
Բայց ուղիղներուն աղօթքը անոր ընդու-  
նելի է :  
9 Տէրը ամբարշտին ճամբայէն կը զզուի .  
Բայց արդարութեան հետեղը կը սիրէ :  
10 Ուղէն ճամբան մերժողին գէշ պատիժ չէ .  
Ու յանդիմանութիւնը ատողը պիտի մեռնի :  
11 Դժոկքը ու կորուստը Տէրոջը առջեն է .  
Որչափ աւելի մարդոց որդիներուն սիրտերը :  
12 Ծաղի ընողը իր յանդիմանից չսիրեր ,  
Եւ իմաստուններուն քովը չերթար :  
13 Ուրախ սիրտը երեսը կը զուարթացընէ .  
Բայց սրտին տրտմութենէն հողին կը ճըն-  
շուի :  
14 Հանձարեղ սիրտը դիտութիւն կը փնտո՞չ .  
Բայց անմիտներուն բերանը յիմարութեամբ  
կը սնանի :  
15 Վշտալց մարդուն ամէն օրէրը գէշ են .  
Բայց ուրախ սիրտը մշտնջենաւոր կոչունքի  
մէջ է :  
16 Աւելի աղէկ է քիչ բանը Տէրոջը վախովք ,  
Քան թէ մեծ գանձը՝ խոռվարթիւնով :

- 17 Աւելի աղեկ է սէր եղած տեղը խոտեղէն  
կերակուրը ,  
Բայ թէ դէր զուարակը՝ ատելութիւնով :
- 18 Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ .  
Բայց երկայնամիտը կոխը կը դադրեցընէ :
- 19 Ծոյլին ձամբան փշեղէն ցանկի պէս է .  
Բայց ուղիղներուն ձամբան քանուկ է :
- 20 Խմաստուն տղան իր հայրը կ'ուրախացընէ .  
Բայց անմիտ մարդը իր մայրը կ'անարդէ :
- 21 Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօ-  
սանիք է .  
Բայց իմաստուն մարդը կ'ուղղէ էր ընթացքը
- 22 Առանց խորհուրդի՝ դիտաւորութիւնները  
կը ցրուին .  
Բայց խորհրդականներուն շատութիւնովը  
կը հաստատուին :
- 23 Մարդը իր բերնին պատասխանովը կ'ուրա-  
խանայ .  
Ու ատենովը ըսուած խօսքը որչափ դեղե-  
ցիկ է :
- 24 Կենաց ձամբան խոհեմ մարդը դեպ ՚ի վեր  
էր դանէ ,  
Որ վարի դժոխքէն հեռանայ :
- 25 Տէրը հպարտներուն տունը կը կործանէ ,  
Բայց որբեարիին սահմանը կը հաստատէ :
- 26 Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առ-  
ջել պիղծ են .  
Բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են :
- 27 Ագահութեան անձնատուր եղողը իր տունը  
խոռվութեան մէջ կը ձգէ .  
Բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի :
- 28 Արդարին սիրտը՝ տալու պատասխանը կը  
մոտածէ .  
Բայց ամբարիշտներուն բերանը չարէք կը  
բղխէ :

- 17 Աւելի աղեկ է սէր եղած տեղը խոտեղէն  
կերակուրը ,  
Բան թէ դէր զուարակը՝ ատելութիւնով :  
18 Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ .  
Բայց երկայնամիտը կոխը կը դադրեցընէ :  
19 Ծոյլին ձամբան փշեղէն ցանկի պէս է .  
Բայց ուղիղներուն ձամբան քանուկ է :  
20 Խմաստուն տղան իր հայրը կ'ուրախացընէ .  
Բայց անմիտ մարդը իր մայրը կ'անարդէ :  
21 Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօ-  
սանիք է .  
Բայց իմաստուն մարդը կ'ուղղէ էր ընթացքը  
22 Առանց խորհուրդի՝ դիտաւորութիւնները  
կը ցրուին .  
Բայց խորհրդականներուն շատութիւնովը  
կը հաստատուին :  
23 Մարդը իր բերնին պատասխանովը կ'ուրա-  
խանայ .  
Ու ատենովը ըսուած խօսքը որչափ դեղե-  
ցիկ է :  
24 Կենաց ձամբան խոհեմ մարդը դեպ ՚ի վեր  
էր դանէ ,  
Որ վարի դժոխքէն հեռանայ :  
25 Տէրը հպարտներուն տունը կը կործանէ ,  
Բայց որբեարիին սահմանը կը հաստատէ :  
26 Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առ-  
ջել պիղծ են .  
• Բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են :  
27 Ագահութեան անձնատուր եղողը իր տունը  
խոռվութեան մէջ կը ձգէ .  
Բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի :  
28 Արդարին սիրտը՝ տալու պատասխանը կը  
մոտածէ .  
Բայց ամբարիշտներուն բերանը չարէք կը  
բղխէ :

- 29 Տէրը ամբարիշտներէն հեռու է ,  
Բայց արդարներուն աղօթքը կը լսէ :  
30 Աչաց լոյսը սիրտը կ'ուրախացրնէ .  
Բարի լուրը ոսկորները կը գիրցընէ :  
31 Կենաց յանդիմանութիւնը լաղ ականջը  
իմաստուններուն մէջը կը բնակի :  
32 Խրատ մերժողը իր հոգին կ'անարգէ .  
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը խելք  
կը վաստըկի :  
33 Տէրոջը վախը իմաստութեան խրատն է ,  
Ու փառաց առջևէն խոնարհութիւնը Է' ԵՌԵՐԵ :

## ԳԼ. Ժ. Զ.

- 1 Մրտին տրամադրութիւնները մարդուն է  
վերաբերին .  
Բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է :  
2 Մարդուն ամէն ճամբաները իրեն մաքուր  
կ'երենան .  
Բայց Տէրը հոգիները կը կշռէ :  
3 Քու գործքերդ Տէրոջը յանձնէ ,  
Եւ քու խորհուրդներդ պիտի հաստատուին :  
4 Տէրը ամէն բան իր նպատակին համար ըս-  
տեղծեց ,  
Ու ամբարիշտն ալ ճախորդ օրուան համար :  
5 Ամէն սրտով հպարտները Տէրոջը առջևը  
պիղծ են ,  
Ու նէլ ձեռք ձեռքի տալով դաբանին , ան-  
պատիժ պիտի չմնան :  
6 Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրէ-  
նութիւնը կը քաւուի ,  
Ու Տէրոջը վախովը մարդ չսրութենէ կը  
հեռանայ :  
7 Երբոր Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի ,  
Մինչև անդամ անոր խնամիները կը հաշ-  
տեցընէ անոր հետ :

- 8 Աղեկ է քիչ բան արդարութեամբ ,  
Քան թէ մեծ եկամուտներ անիրաւութեամբ .
- 9 Մարդուն սիրոը իր ճամբան կը հնարէ .  
Բայց անոր քայլերը Տէրը կ'ուղղէ :
- 10 Թագաւորին շրթունքներուն վրայ աստուա-  
ծային ազդեցութիւն կայ .
- Անոր բերանը դատաստանի մէջ չսխալիր ,
- 11 Ուղիղ կշռորդը և կշռքը Տէրոջն է .  
Մահսաղին ամէն իշտ+է քարերը անոր դործ-  
քըն են :
- 12 Չարագործութիւնը թագաւորներուն զըզ-  
ուելի է .
- Վասն զի աթոռը արդարութեամբ կը հաս-  
տատուի :
- 13 Արդար շրթունքները թագաւորներուն հա-  
ճելի են ,
- Ու շիտակ խօսողը կը սիրեն :
- 14 Թագաւորին բարկութիւնը մահուան դես-  
պաններու ուս է .
- Բայց իմաստուն մարդը զանիկա կ'իջեցընէ :
- 15 Թագաւորին երեսին լոյսը կեանք է .
- Ու անոր հաճութիւնը վերջի անձրեին ամ-  
պին պէս է :
- 16 Իմաստութիւն ստանալը ոսկիէն որչափ ա-  
ղեկ է .
- Եւ հանճար վաստըկիլը արծաթէն սաւելի  
ընտիր է :
- 17 Ուղիղներուն մեծ ճամբան չարութենէ հրա-  
ժարին է .
- Իր ճամբուն զգուշութիւն ընողը իր հոգին  
կը պահէ :
- 18 Խոտորածին առջեւն՝ հպարտութիւն ,  
Ու կործանման ըուջեւն ամբարտաւանու-  
թեան ոգին ի'երիոյ :
- 19 Խոնարհներուն հետ խոնարհ ռլաշը

- Հպարտոներուն հետ աւար բաժնելէն աղեկ  
է :
- 20 Գործքի մէջ խելացութեամբ վարուղը բա-  
րիք կը դանէ :
- Ու Տէրոջը ապաւինողը Երանելի է :
- 21 Իմաստուն սիրտ ունեցողը խոհեմ կ'ըսուի .  
Եւ շրթանց քաղցրութիւնը դիտութիւն  
կ'աւելցընէ :
- 22 Խոհեմութիւնը՝ ունեցողին կենաց աղբիւր է .  
Բայց յիմարներուն խրատը յիմարութիւն է :
- 23 Իմաստունին սիրտը իր բերնին իմաստու-  
թիւն կուտայ ,  
Ու իր շրթունքներուն դիտութիւն կ'աւել-  
ցընէ :
- 24 Վայելուչ խօսքերը մեզրի խորիսին պէս է .  
Հոգին քաղցր ու ոսկորներուն բժշկու-  
թիւն է :
- 25 Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երենայ ,  
Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է
- 26 Աշխատող անձը իրեն համար կ'աշխատի .  
Քանզի իր բերանը կը պահանջէ իրմէ :
- 27 Անօրէն մարդը չարութիւն կը փորէ ,  
Ու անոր շրթունքներուն վրայ իբր թէ այ-  
րող կրակ մը կայ :
- 28 Ծուռ մարդը կոիւ կը հանէ ,  
Եւ քսուն մտերիմ բարեկամները կը զատէ :
- 29 Անօրէն մարդը իր բնկերը կը խարէ ,  
Ու զանիկա դէշ ճամբ սներ կը տանի .
- 30 Նենդութիւններ մտածելու համար աչքերը  
կը դոցէ .  
Եւ շրթունքները խածնելով չարութիւնը  
կը կատարէ :
- 31 Մազի ճերմկութիւնը շիտաց պսակ է ,  
Թէ որ անիկա արդարութեան ճամբուն մէջ  
է տնւի :

- 32 Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է ,  
Ու իր ոգին զսպողը՝ քաղաք առնողէն :
- 23 Վիճակը ծոցը կը ձդուի ,  
Բայց անոր ամէն կարդադրութիւնը Տէրոջ-  
մէ է :

## ԳԼ. ԺԷ

- 1 Աղէկ է պատառ մը չոր հաց խաղաղութիւ-  
նով ,  
Քան թէ տուն մը լեցուն զոհեր՝ կոիւովլ :
- 2 Խոհեմ ծառան նախատինք բերող որդիին  
կ'իշխէ ,  
Ու եղբարց մէջ ժառանդութեան բաժին  
կ'առնէ :
- 3 Արծաթի համար հալոց և ոսկիի համար  
քուրայ կայ .  
Բայց սիրտերը փորձողը Տէրն է :
- 4 Չար մարդը անիրաւին շրթանցը մտիկ կ'ընէ ,  
Ու ստախօսը վնասակար լեզուին ականջ կը  
դնէ :
- 5 Աղքատը ծաղը ընողը անոր Ստեղծիչը կ'ա-  
նարդէ ,  
Եւ ծախորդութեան վրայ ուրախացողը ան-  
պատիժ պիտի չմնայ :
- Որդւոց որդիները ծերերուն պսակն է ,  
Եւ որդւոց պարծանքը իրենց հայրերն են :  
Ընտիր խօսքը տնղամին չվայլեր .  
Որչափ աւելի ստախօս շրթունքը՝ ազնուա-  
կանին :
- 8 Պարզել՝ դըրձածողին առջել պատուական  
զոհարի պէս է ,  
Ուր որ դառնայ՝ յաջողութիւն կը գտնէ :
- 9 Յանցանքը ծածկողը բարեկամութիւն կը  
փնտուէ .

- Բայց զանիկա պատմողը մտերիմ բարեկամ-  
ները կը զատէ :
- 10 Խոհեմ մարդուն աւելի կ'ազդէ Հէ յանդի-  
մանսւթիւնը ,  
Քան թէ հարիւր է հարուած՝ յի-  
մարին :
- 11 Չար մարդը միշտ ապստամբութիւն կը փըն-  
տըռէ ,  
Ու անոր խիստ պատգամաւոր կը խրկուի :
- 12 Ալ աղէկ է ձաղերը գողցուած արջուն առ-  
ջեր ելլել ,  
Քան թէ յիմարի մը՝ անոր յիմարութեան  
ատենը :
- 13 Ով որ աղէկութեան փոխարէն չարիք կը հա-  
տուցանէ ,  
Չարիքը անոր տունէն պակաս պիտի չըլլայ:
- 14 Կուիւին սկզբնաւորութիւնը ջուրին արձակ-  
մանը կը նմանի .
- Ուրեմն վէճը չբոլնկած՝ ետ քաշուէ :  
15 Ամբարիշտը արդարացընողը՝ և արդարը ամ-  
բարիշտ հանողը՝  
Երկուքն այ Տէրոջը առջեր պիղծ են ,  
16 Իմասւութիւնը ծախու առնելու զինը ի՞նչ  
օդուտ ունի յիմարին ձեռքը ,  
Որովհետեւ խելք չունի :
- 17 Բարեկամը ամէն ատեն կը սիրէ ,  
Ու եղբայրը նեղութեան առենէ համար ծը-  
նած է :
- 18 Պակասամիտ մարդը ձեռքը կու տայ ,  
Ու իր բարեկամին համար երաշխաւու կ'ըլ-  
լայ :
- 19 Կուիւ սիրողը յանցանք կը սիրէ .  
Իր դուռը բարձրացընողը է՛ կործանումը կը  
փնտուէ :
- 20 Ծուռ սիրտ ունեցողը աղէկութիւն չգտներ ,

Ու նենգաւոր լեզուով մարդը չարիքի մէջ  
կ'իյնայ :

21 Յիմարը ծնանողը տրտմութիւն կը կրէ ,  
Եւ անզգամին հայրը չուրախանար :

22 Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է .  
Բայց կոտրած սիրտը ոսկորները կը չորցընէ :

23 Անօրէն մարդը ուրիշն ծոցէն կաշառք կ'առ-  
նէ ,

Որ արդարութեան ճամբաները ծուէ :

24 Իմաստութիւնը խոհեմ մարդուն առջևն է .  
Բայց յիմարին աչքերը երկրին ծայրերն են :

25 Յիմար տղան՝ իր հօրը տրտմութիւն  
Ու զինքը ծնանողին դառնութիւն կ'ըլլոյ :

26 Աղէկ չէ արդարէն տուգանք առնելը ?  
Ու ու իշխանները ծեծելը՝ իրաւունք չնելուն  
համար :

27 Իր խօսքերը զսպողը իմաստուն է ;

Ու երկայնամիտ մարդը հանձարեղ է .

28 Յիմարը անգամ թէ որ լուռ կենայ , իմաս-  
տուն՝

Ու իր շրմունքները գոցողը հանձարեղ կը  
սեպուի :

### ԳԼ. ԺԼ

1 Ինքնահաճոյ մարդը եր ցանկութիւնը կը  
փնտուէ

Եւ ամէն խորհուրդի դէմ կը կենայ :

2 Յիմարը խոհեմութենէ չախորժեր ,  
Հապա իր սրտին հէլ էլուծը յայտնել ի՞ուո՞ւ :

3 Երբոր ամբարիշտը գայ , անարգութիւն ալ  
կու գայ ,

Ու նախատինքի հետ խայտառակութիւն :

4 Մարդուն բերնին խօսքերը խորունկ ջուրեր  
են .

Իմաստութեան աղբիւրը առատաբռաղլս գետ  
է :

5 Դատաստանի մէջ արդարը սուտ հանելու  
համար՝

Ամբարշտին աչառութիւն ընելը աղեկ չէ :

6 Անմիտ մարդուն շրթունքները կուիւի մէջ  
կը մտնեն,

Ու անոր բերանը ծեծը կը կանչէ :

7 Անմիտ մարդուն բերանը իրեն կործանում է :

Եւ անոր շրթունքները իր անձին սրոդոյթ-

է :

8 Քսու մարդուն խօսքերը քաղցր պատառ-  
ներու պէս են,

Ու անոնք մինչև փորին շտեմարանները կ'իջ-  
նեն :

9 Ան որ իր դործքին մէջ թոյլ է,  
Ըույլ մարդուն եղբայրն է :

10 Տէրոջը անունը ամուր աշտարակ է .  
Արդարը անոր կը դիմէ, ու ապահով ապաս-

տանարան կ'ունենայ :

11 Հարուստին ստացուածքը իր ամուր քա-  
ղաքն է,

Ու անոր երևակայութեանը մէջ բարձր բեր-  
դի պէս է :

12 Կոտորածէն առաջ մարդուն սիրտը կը հը-  
պարտանայ .

Բայց փառաց առջեկն խոնարհութիւնը  
- չէրնայ :

13 Ով որ բան հը չլուած պատասխան կու տայ ;  
Յիմարութիւն ու նախատինք է անոր :

14 Մարդուն հոդին իր հիւանդութեանը կը համ-  
բերէ .

Բայց վիրաւորուած հույին ո՞վ կընայ մսի-  
թարել :

15 Խոհեմին սիրտը դիտութիւնը կը վաստըկի .

- Եւ իմաստուններուն ականջը գիտութիւն  
կը փնտռէ :
- 16 Մարդուն ընծան անոր ճամբայ կը բանայ ,  
Ու զանիկա մեծերուն առջեր կը տանի :
- 17 Իր գատը առաջ սկսողը իրաւունք ունեցող  
կը «Եղուած» :
- Բայց երբոր իր սսոխը դայ՝ զանիկա կը քննէ :
- 18 Ալիձակը վէճերը կը դադրեցընէ ,  
Ու զօրաւորներուն մէջտեղը որոշում կ'ընէ :
- 19 Աշտացած եղբայր մը ամուր քաղաքէն անտ-  
ռէի է .
- Եւ անոր վէճերը բերդի մը նիզերուն կը նը-  
մանին :
- 20 Մարդ իր բերնին պտուղէն իր փորը կը կըշ-  
տացընէ ,  
Ու իր շրթունքներուն արդիւնքէն կը կշտա-  
նայ :
- 21 Մահը ու կեանքը լեզուին ձեռքն է ,  
Եւ զանիկա սիրողները անոր պտուղը կ'ու-  
տեն :
- 22 Առաջնէ կնիկ զտնողը բարիք կը զտնէ ,  
Ու Տէրոջմէն շնորհք մը կը ստանայ :
- 23 Աղքատը աղաչելով կը խօսի ,  
Բայց հարուստը խիստ պատասխան կու տայ:
- 24 Բարեկամներ ունեցող մարդը բարեկամու-  
թիւն ընելու է .  
Ու եղբօրմէ աւելի հաստատ բարեկամ կայ :

## ԳԼ. ԺԹ

- 1 Իր կատարելութեանը մէջ քալող աղ բատը  
Նենդաւոր շրթունք ունեցող յիմարէն ա-  
ղէկ է :
- 2 Հոգիին տղիտութիւնը աղէկ չէ ,  
Ու ստքերովը արտորացողը կը սահի :

- 3 Մարդուն յիմարութիւնը անոր ճամբան  
կ'աւրէ ,
- Եւ անոր սիրտը Ցէրոջը գէմարտունջ կ'ընէ :  
4 Հարստութիւնը շատրարեկամներ կ'աւելցընէ .  
Բայց աղքատը իր բարեկամէն կը զատուի :
- 5 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,  
Ու ստութիւններ խօսողը պիտի չազատի :
- 6 Ըատերը առատածեռն մարդուն հաճութիւ-  
նը կը փնտուեն ,  
Ու ամէն մէկը պարզեատու մարդուն բա-  
րեկամ կ'ըլլայ :
- 7 Աղքատին բոլոր եղբայրները անկէ կը զըդ-  
ուին .
- Անոր բարեկամները՝ ալ աւելի անկէ կը հե-  
ռանան .
- Անիկա ոչինչ խօսքերու ետեէ կ'իյնայ ,  
8 Խելք վաստրկողը իր հոգին կը սիրէ .  
Իմաստութիւն պահողը բարիք պիտի գտնէ :  
9 Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,  
Ու ստութիւններ խօսողը պիտի կորսուի ,  
10 Ցիմարին փափկութիւն չփայլէր .  
Որչափ աւելի ծառայի մը՝ իշխաններու վրայ  
իշխել :
- 11 Մարդուն խոհեմութիւնը անոր բարկութիւ-  
նը կը զսպէ ,  
Եւ յանցանք ներելը անոր պարծանք է :  
12 Թագաւորին բարկութիւնը առոյգ առիւծի  
մոնշիւնին կը նմանի ,  
Իսկ անոր հաճութիւնը խստի վրայի ցողին  
պէս է :
- 13 Անմիտ տղան իր հօրը թշուառութիւնն է ,  
Ու կնկան կոիւները շարունակ կաթիներու  
պէս են .
- 14 Տունը ու ստացուածքը հայրերէն նայ-ժ  
ժառանգութիւն են .

Բայց խոհեմ կնիկը Տէրոջմէ է :

15 Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ ,

Եւ թոյլ մարդը անօժի կը մնայ :

16 Պատուիրանքը պահողը իր հոգին կը պահէ .

Իր ձամբաները անարգողը պիտի մեռնի :

17 Աղքատին ողորմութիւն ընսղը Տէրոջը փոխ կու տայ ,

Ու անիկա անոր հատուցում պիտի ընէ :

18 Քանի որ յոյս կայ՝ տղադ խրատէ ,

Եւ անոր մահուանը կամակից մի ըլլար :

19 Խիստ բարկացող մարդը վսած կը կրէ .

Վասն զի թէ որ անգամ իւ աղատես՝ նորէն ընելու ես :

20 Խրատը լսէ և կրթութիւնը ընդունէ ,

Որ քու ետքի ատենդ իմաստուն ըլլաս .

21 Մարդուն սրտին մէջը շատ դիտաւորութիւններ կան ,

Բայց Տէրոջը խորհուրդը հաստատուն պիտի մնայ :

22 Մարդուն ողորմածութիւնը իր փառքն է .

Ու աղքատը ստախօսէն աղէկ է :

23 Տէրոջը երկիւղը կենաց պատճառ է ,

Եւ զանիս ունեցող կուշտ կը պառկի , ու ձախորդութեան չհանդիպիր :

24 Ծոյլը իր ձեռքը ամանին մէջը կը խոթէ ,

Ու զանիկա իր բերանը անդամ չդարձներ :

25 Ծաղը ընողը ծեծէ , ու միամիտը խելացի կ'ըլլայ .

Եւ թէ որ իմաստունը յանդիմանես՝ հանձարը կը հասկընայ :

26 Եր հայրը կործանողը ու էր մայրը վուրնտողը Ամօթ ու նախատինք բերող տղայ մըն է :

27 Որդեակ իմ , ետ կեցիր ան խրատը մտիկ ընելէն ,

- Որ +է՞ւ իմաստութեան խօսքերէն կը խռոր-  
ցընէ :
- 28 Զար վկան արդարութիւնը ծաղր կ'ընէ ,  
Ու ամբարիշտներուն բերանը անիրաւութիւն  
կը կլէ :
- 29 Ծաղր ընողներուն համար գատաստաններ՝  
Եւ անմիտներուն կոնակին համար ծեծեր  
պատրաստուած են :

## ԳԼ. Ի

- 1 Գիինին ծաղր ընող է , ու ցքին կոխւ հանող ,  
Եւ ովոր ասոնց անձնատուր կ'ըլլայ՝ իմաս-  
տուն չըլլար :
- 2 Թագաւորին ահը առայդ առիւծի մոնչիւ-  
նին պէս է ,  
Ու զանիկա բարկացընողը իր անձին մխաս  
կ'ընէ :
- 3 Կոխւէն ետ կենալը մարդուն փառք է ,  
Բայց ամէն յիմար կուուասէր է :
- 4 Ծպյլ՝ Զմեռ է ըսելու , էւրինը չէրկեր .  
Ուստի հունձքի ատենը պիտի մուրայ , ու  
րան մը պիտի չունենայ :
- 5 Մարդու մը սրտին մէջ խորհուրդը խորդունկ  
ջուրերու պէս է .  
Բայց խելացի մարդը զանիկա կը հանէ :
- 6 Մարդոցմէ շատերը իրենց բարերարութիւնը  
կը հրատարակեն .
- Բայց հաւատարիմ մարդ մը ո՞վ կընայ գըտ-  
նել :
- 7 Իր անարատութեանը մէջ քալողը արդար է .  
Անոր որդիները իր ետևէն երջանիկ պիտի  
ըլլան :
- 8 Դատաստանի աթոռը նստող թագաւորը  
իր աչքերով ամէն չարիքը կը ցրուէ :

- 9 Ո՞վ կրնայ ըսել թէ իմ սիրտս սրբեցի ,  
իմ մեղքէս մաքրուեցայ :
- 10 Երկու տեսակ իշուրէ քար , երկու տեսակ  
չափ :
- Հաւասարապէս Տէրոջը առջեր պիղծ են :  
11 Մինչև անդամ տղու մը վարքին մաքրու-  
թիւնը և ուղղութիւնը
- Անոր գործքերէն կը հասկըցուի :
- 12 Լոող ականջը ու տեսնող աչքը՝  
Երկուքն ալ Տէրը ստեղծեր է :
- 13 Քունը մի սիրեր որ չըլլայ թէ աղքատանաս .  
Աչքերդ բաց որ հացով կշտանաս :
- 14 Ծախու առնողը գէշէ , գէշէ՝ կ'ըսէ .  
Բայց երբոր երթայ՝ անատենը կը պարծենայ :
- 15 Ոսկի ու շատ գոհար կը գտնուի .  
Բայց զիտութեան շրթունքները մեծադին  
զարդեր են :
- 16 Օտարականի մը երաշխաւոր եղողին զղեստը  
առ .
- Եւ օտար կնկան համար երաշխաւոր եղողին  
զրաւ առ :
- 17 Ստութեան հացը մարդուն ախորժելի է ,  
Բայց ետքը անոր բերանը խիճով պիտի լե-  
ցուի :
- 18 Դիտաւորութիւնը խորհրդով կը հաստա-  
տուի .
- Ուստի խոհեմութեամբ պատերազմ ըրէ .
- 19 Բանսարկութեան պարտողը դաղտնիքը կը  
յայտնէ .
- Ուրեմն շրթունքներով շողոքորթութիւն  
ընողին հետ հաղորդակցութիւն մի ը-  
ներ :
- 20 Ով որ իր հայրը ու մայրը կ'անիծէ ,  
Անոր ճրագը մուխթ խաւարի մէջ պիտի մա-  
րի :

- 21 Կայ ժառանդութիւն՝ որ սկիզբը արտորնօք  
կ'առնուի .
- Բայց անոր վերջը պիտի չօրհնուի :
- 22 Չարութեան փոխարէնը հատուցանեմ մի  
ըսեր .
- Տէրոջը սպասէ, ու անիկա քեզ պիտի ա-  
զատէ :
- 23 Երկու տեսակ էւէտէ քարը Տէրոջը առջել  
պիղծ է,
- Ու նենդաւոր կշիռքը աղեկ չէ :
- 24 Մարդուն քայլերը Տէրոջմէն է .
- Ուստի մարդը իր ճամբան ի՞նչպէս հասկը-  
նայ :
- 25 Անխորհրդաբար բան մը նուիրելը , և ուխտ  
ընելէն ետքը քննութիւն ընելը  
Մարդուն որոդայթ մըն է :
- 26 Իմաստուն թագաւորը ամբարիշտները կը  
ցրուէ .
- Ու անիւը անոնց վրայ կը դարձընէ :
- 27 Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է ,  
Սրտին բոլոր շտեմարանները կը քննէ :
- 28 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը թագա-  
ւորը կը պահէն .
- Անիկա ալ իր աթոռը ողորմութեամբ կը  
հաստատէ :
- 29 Երիտասարդներուն զարդը անոնց ոյժն է ,  
Եւ ծերոց փառքը ալևորութիւնն է :
- 30 Վէրքի նշանները ու փորի շտեմարանները  
հասնող հարուածները  
Չար մարդուն մաքրողական գեղ են :

## ԳԼ. ԻԱ

1 Թագաւորին սիրտը ջնւրի վտակներու ու-  
է Տէրոջը ծեռքին մէջ ,

Զանիկա որ կողմը ուզէ կը դարձընէ :

2 Մարդուն ամէն ճամբան իրեն ուղիղ կ'երևնայ :

Բայց Տէրը սիրտերը իը կշռէ :

3 Արդարութիւն և իրաւունք գործելը  
Զոհէն աւելի ընդունելի է Տէրոջը :

4 Աչաց ամբարտաւանութիւնը և սրտի հպարտութիւնը

Եւ ամբարշտաց լոյաը մեղք է :

5 Աշխատասէր մարդուն խորհուրդները՝ միայն  
առատութիւն իւ բերէն .

Բայց ամէն արտորացող միայն կարօտութիւն իւ բերէ :

6 Սուտ լեզուով զանձեր վաստըկիլը

Մահը փնտուսղներուն հալածած ունայնութիւնն է :

7 Ամբարիշտներուն բռնութիւնը զանոնք պիտի կորսընցընէ .

Վասն զի իրաւունք ընել չեն ուզեր :

8 Երբոր մարդուն ճամբան ծուռ է, կը խոտորի .

Բայց մաքուր եղողին գործքը ուղիղ է :

9 Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլքան թէ կոռուասէր կնկան հետ մեծ տան մէջ :

10 Ամբարիշտ մարդուն հոդին չարութեան կը ցանկայ ,

Ու անոր ընկերը անոր առջել շնորհք չըդրտներ :

11 Թէ որ ծաղը ընողը տուղանքի հանդիպի ,  
միամիոր իմաստուն կ'ըլլայ ,

Եւ թէ որ իմաստունը իրատուի , գիտութիւն կը ստանայ :

12 Արդարը խոհեմութեամբ ամբարշտին տունը կը դիտէ ,

- Եւբոր ամբարիշտները չարութեան համար  
կը կործանին :
- 13 Ով որ աղքատին աղաղակը չսելու համար  
իր ականջը կը գոցէ ,  
Ինքն ալ պիտի աղաղակէ , ու իրեն լսող պի-  
տի չըլլայ :
- 14 Գաղտնի պարդեւը բարկութիւնը կ'իջեցընէ ,  
Նւ ծոցը ու լնծան սաստիկ կատա-  
ղութիւնը և ու ու ու զնէ :
- 15 Իրաւունքը ընելը արդարին ուրախութիւն է ,  
Բայց անիրաւութիւն ընողներուն տանջտնք  
է :
- 16 Խոհեմութեան ճամբայէն մոլորող մարդը  
Մեռելներուն ժողովքին մէջը կ'իջնէ :
- 17 Ուրախութիւն սիրողը կարօտութեան մէջ  
կ'իյնայ .
- Գինին ու եղը սիրողը չհարատանար :
- 18 Ամբարիշտը արդարին համար ,  
Ու . անօրէնը ուղեղներուն համար փրկանիք  
կ'ըլլայ :
- 19 Աղէկ է անապատ տեղ մը ընակիլ՝  
Քան թէ կոռւասէր ու բարկացող կնկան  
հետ :
- 20 Իմաստունին ընակարանին մէջ ցանկալի  
դանձ ու եղ կը գտնուի .
- Բայց անմիտ մարդը իր ունեցածը կը կլէ :
- 21 Արդարութեան ու ողորմածութեան հետե-  
ւողը  
կեանք , արդարութիւն և փառք պիտի  
գտնէ :
- 22 Իմաստունը զօրաւորներուն քաղաքը կ'ելլէ ,  
Եւ անոնց ապաւինած ամրութիւնը կը փըլ-  
ցընէ :
- 23 Իր բերանը ու լեզուն պահողը  
Իր հոգին նեղութիւններէն կը պահէ :

- 24 Հպարտութեամբ և բարկութեամբ վարուող  
մարդուն անունը  
Հպարտ և յանդուցն ծաղր ընող ԷՇՈՒՔ :
- 25 Ծոյլին ցանկութիւնը զանիկա կը մառցընէ ,  
Վասն զի անոր ձեռքերը աշխատիլ չեն ու-  
զեր :
- 26 Անիկա ամէն օր ստատիկ կը ցանկայ .  
Իսկ արդարը կու տայ ու չխնայեր :
- 27 Ամրարիշտներուն զոհը պիղծ է ,  
Մանաւանդ երբոր զանիկա չար դիտաւո-  
րութեամբ կը մատուցանեն :
- 28 Սոււտ վկան պիտի կորսուի .  
Բայց լսող մարդը հաւատարմութեամբ պի-  
տի խօսի :
- 29 Ամրարիշտ մարդը իր երեսը կը պինտցընէ .  
Բայց ուղիղը իր ճամբաները կը շխտկէ :
- 30 Իմաստութիւն , հանձար կամ խորհուրդ մը  
չկայ ,  
Ու Տէրոջը դէմ ինույ :
- 31 Պատերազմի օրուան համար ձին կը պատ-  
րաստուի ,  
Բայց փրկութիւնը Տէրոջմէ է :

## ԳԼ. ԻԲ

- 1 Բարէ անունը շատ հարստութենէն աւելի  
ընտիր է .  
Ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն աղէկ է :
- 2 Հարուստը ու աղքատը իրարու կը հանդի-  
պին .  
Անոնց ամէնը ստեղծողը Տէրն է :
- 3 Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը զգու-  
շանայ :  
Բայց միամիտները առաջ կ'անցնին ու զնաս  
կը կրեն :

4 Խռնարհութեան և Տէրոջը Երկիւղին վախ-  
ճանը

Հարստութիւն, փառք ու կեանք է :

5 Ծուռ մարդուն ճամբուն մէջ փուշեր ու ո-  
րոգայթներ կան .

6 Իր հոգին պահողը անոնցմէ հեռու կ'ըլլայ :

6 Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը ,  
Որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխո-

տորի :

7 Հարուստը աղքատներուն վրայ կը տիրէ ,  
Ու փոխ առնողը փոխ տուողին ծառայ կ'ըլ-  
լայ :

8 Չարութիւն ցանողը ունայնութիւն կը հնձէ ,  
Եւ անոր բարկութեանը գաւազանը պիտի  
կորսուի :

Աղէկ աչք ունեցողը օրհնած կ'ըլլայ ,

Վասն զի իր հացեն աղքատին կու տայ :

10 Ծաղը ընողը թէ որ վուշնտես , կոփւը կ'անց-  
նի ,

Ու վէճը և անարդանքը կը դադարի :

11 Սրտի մաքրութիւն սիրողին շրթունքներուն  
վրայ շնորհք կայ ,

Ու թագաւորը անոր բարեկամ կ'ըլլայ :

12 Տէրոջը աչքերը դիտութիւնը կը պահպանեն ,  
Եւ ինքը անօրէնին խօսքերը կ'աւրէ :

13 Ծոյլը կ'ըսէ , Դուրսը առիւծ կայ ,

Հրապարակին մէջը պիտի մեռցուիմ :

14 Օտար կնիկներուն բերանը խորունկ փոս է ,  
Տէրոջը ատելի եղողը հոն կ'իյնայ :

15 Մանուկին սրտին մէջ յիմարութիւնը կա-  
պուած է .

Զանիկա խրատի գաւազանը կը հեռացընէ  
անկէ :

16 Իր սրացածութէ շատցընելու համար աղքա-  
տին զրկանք ընողը

- Ու հարուստին տուողը անշուշտ կարօտութեան կը հասնի :
- 17 Ականջդ ծռէ ու իմաստուններուն խօսքերը մտիկ ըրէ ,  
Եւ քու սիրտդ իմ՝ գիտութեանս տուր .
- 18 Վասն զի թէ որ անոնք քու սրտիդ մէջը  
պահես , հաճելի բան է .  
Անոնք քու շրթունքներուդ վրայ ալ պիտի  
հաստատուին :
- 19 Ահա քեզի ու բաները այսօր իմացուցի ,  
Որպէս զի քու ապաւինութիւնդ Տէրոջը  
վրայ ըլլայ :
- 20 Միթէ ես քեզի շատ սնդամ խրատներով  
Ու գիտութեամբ չգրեցի :
- 21 Որ քեզի ճշմարիտ խօսքերուն ստուգութիւնը սորվեցընեմ ,  
Որ քեզի հարցընողներուն ճշմարիտ խօսքերով  
պատասխան տաս :
- 22 Աշքատը մի կողոպտեր իր աշքատութեանը համար ,  
Ու տնանկը դատաստանի մէջ մի կոխեր .
- 23 Վասն զի Տէրը անոնց իրաւունքը պիտի  
պաշտպանէ ,  
Եւ զանոնք կողոպտողներուն հոգին պիտի  
կողոպտէ :
- 24 Բարկացող մարդուն հետ ընկերութիւն  
մի ըներ .  
Ու ցասկոտ մարդուն հետ մի երթար .
- 25 Որ չըլլայ թէ անոր ճամբաները սորվիս ,  
Եւ քու հոգւոյդ որոգայթ վաստըկիս :
- 26 Զեռք տուողներէն մի ըլլար .  
Ու ու պարտքի հաւար երաշխաւոր եղողներէն .

27 Թէ որ վճարելու կարողութիւն չունիս ,  
ինչու համար տակեդ քու անկողինդ առնեն ,  
28 Զըլայ որ տեղէն վերցընես ան վաղեմի սահ-  
մանին նշուն ,  
Որ քու հայրերդ դրեր են :

29 Իր գործքին մէջ ժիր մարդ մը կը տեսնե՞ս ,  
Անիկա թագաւորներուն առջեր պիտի կայնի .  
Անշան մարդոց առջեր պիտի չկայնի :

## ԳԼ. ԻԳ

- 1 Երբոր իշխանի հետ սեղան նստիս ,  
Առջեդ դրուածը աղեկ նայէ .
- 2 Ու թէ որ դուն ախորժակի տէր ժորդ ես ,  
Կոկորդիդ վրայ դանակ դիր :
- 3 Անոր ազնիւ կերակուրներուն մի ցանկար .  
Վասն զի անոնք խարեւութեան հաց են :
- 4 Հարուստ ըլլալու մի աշխատիր .  
Քու խորհուրդէդ ետ կեցիր :
- 5 Աչք պիտի տնկե՞ս ան բանին որ ոչինչ է .  
Անիկա անշուշտ իրեն թեւեր կը շնիէ ,  
Ու արծիւի պէս օդը կը թռչի :
- 6 Զար աչք ունեցողին հացը մի ուտեր ,  
Եւ անոր ազնիւ կերակուրներուն մի ցան-  
կար .
- 7 Վասն զի անիկա իր սրտին մէջը ինչպէս որ  
կը մտածէ , այնպէս է .  
Կեր ու իմէ կ'ըսէ քեզի ,  
Բայց անոր սիրոը քեզի հետ չէ :
- 8 Կերած պատառդ պիտի փսխես ,  
Ու հաճելի խօսքերդ պիտի էորսընցընես :
- 9 Յիմարին ականջներուն մի խօսիր ,  
Քանդի քու խօսքերաւդ իմաստութիւնը  
կ'անարդէ :

- 10 Վաղեմի սահմանին Նշանը տեղէն մի վերցը-  
ներ ,  
Ու որբերուն արտերը մի մտներ .
- 11 Քանզի անոնց Վրէժինդիրը զօրաւոր է ,  
Եւ քեզի գէմ անոնց իրաւունքը անիկա պի-  
տի պաշտպանէ :
- 12 Քու սիրտդ խրատի տուր ,  
Ու ականջներդ՝ գիտութեան խօսքերուն :
- 13 Տղայէն խրատը մի կտրեր ,  
Վասն զի թէ որ զանիկա զաւազանով ծե-  
ծես , չմեռնիր :
- 14 Դուն անիկա զաւազանով կը ծեծես ,  
Բայց անոր հողին դժոխքէն կ'ազատես :
- 15 Որդեակ իմ , թէ որ քու սիրտդ իմաս-  
տուն ըլլոյ ,  
Իմ սիրտս ալ պիտի ուրախանայ :
- 16 Ու երբոր քու շրթունքներդ ուղիղ բաներ  
խօսին ,  
Իմ երիկամունքներս պիտի ցնծան :
- 17 Քու սիրտդ մեղաւորներուն չնախանձի ,  
Հապա ամէն օր Տէրոջը վախիին մէջ եղեր ,
- 18 Վասն զի իրաւցընէ վախճան մը կայ ,  
Ու քու յոյսդ պիտի չկտրի :
- 19 Որդեակ իմ , լոէ ու իմաստուն եղեր ,  
Եւ քու սիրտդ ուղիղ ճամբուն մէջ շիտկէ :
- 20 Մի ընկերանար դինեմոլներուն հետ ,  
Ու իրենց մարմինը մաշողներուն հետ .
- 21 Վասն զի զինեմոլը ու շոայլը աղքատ կ'ըլ-  
լան .  
Եւ լուր քունը պատըռտած հանդերձներ կը  
հազցըն :
- 22 Հնազանդութիւն ըրէ հօրդ որ քեզ ծներ է ,  
Ու մի անարդեր քու մայրդ՝ երբոր կը պառւի :

- 23 Ճշմարտութիւնը ծախու առ ու զանէն մի  
ծախեր .
- Նաև ապէս իմաստութիւնը , խրատը ու հան-  
ճարը :
- 24 Արդարին հայրը շատ պիտի ցնծայ ,  
Եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր վրայ  
պիտի ուրախանայ :
- 25 Թող քու հայրդ ու մայրդ +ու կրոդ ուրա-  
խանան ,  
Ու քեզ ծնանողը թող ցնծայ :
- 26 Որդեակ իմ , քու սիրտդ ինծի տուր ,  
Եւ քու աչքերդ թող իմ ճամբաներս դի-  
տեն .
- 27 Վասն զի պոռնիկը խորունկ փոս է ,  
Ու օտար կնիկը նեղ ջրհոր է .
- 28 Եւ անիկա դողի պէս դարանը կը մտնէ ,  
Ու մարդոց մէջ անհաւատարիմները կ'աւել-  
ցընէ :
- 29 Որո՞ւնն է վայը . որո՞ւնն է ոհը .  
Որո՞ւնն են կոիւները . որո՞ւնն են տրտունջ-  
ները .
- Որո՞ւնն են առանց պատճառի վէրբերը .  
Որո՞ւնն է աչաց կարմրութիւնը :
- 30 Գինիին քովո մնացողներուն ,  
Խառնած գինին փնտուելու դացալներուն :
- 31 Ար նայիր գինիին կարմրութեանը ,  
Գաւաթին մէջ իր գոյնը ցուցընելուն ու շե-  
տակ վազելուն .
- 32 Անիկա ետքը օձի պէս կը խածնէ ,  
Ու քարրի պէս կը խայթէ :
- 33 Անէւ երւը քու աչքերդ օտար կնիկներու  
պիտի նային ,
- Եւ քու սիրտդ ծուռաներ պիտի խօսի .
- 34 Եւ ծովուն մէջը պառկողի պէս

Ու կայմի վրայ պառկողի պէս պիտի ըլլաս :  
35 Եւ դէրէ ը-է-

Զիս ծեծեցին , ու ես ցաւ մը չզգացի ,  
Լնծի զարկին , ու ես բան մը չիմացայ .  
Ե՞րբ պիտի արթըննամ ,  
Որ զանիկա նորէն փնտռեմ :

## ԳԼ. ԻԴ

1 **Ղ**ար մարդոց մի նախանձիր ,

Ու անոնց հետ կենալու մի ցանկար .

2 **Վ**ասն զի անոնց սիրտը բռնութիւն կը խոր-  
հի ,

Եւ անոնց շրթունքները վնասներու վրայով  
կը խօսին :

3 **Ց**ունը իմաստութեամբ կը շինուի ,

Ու հանճարով կը հաստատուի :

4 **Ե**ւ շտեմարանները գիտութեամբ՝

Ամէն դէստ պատուական ու վայելուչ գան-  
ձերով կը լեցուին :

5 **Ի**մաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ .

Ու գիտութիւն ունեցողը ոյժը կ'աւելցընէ :

6 **Վ**ասն զի պատերազմդ խոհեմութեամբ կ'ը-  
նես .

Եւ ազատութիւնը խօրհրդականներու շա-  
տութիւնով կ'ըլլայ :

7 **Ի**մաստութիւնը յիմարին համար շատ բար-  
ձըր է .

Անիկա դրանը մէջ իր բերանը չբանար :

8 Ով որ չարութիւն ընել կը մնածէ ,

Անիկա նենդամիտ պիտի ըսուի :

9 Յիմարութեան խօրհուրդը մեղք է ,

Եւ ծաղր ընողր մարդոց զղուելի է :

10 Թէ որ նեղութեան ցը թուլաս ,

Ոյժդ քիչ է :

- 11 Ազատէ զանոնք որ մեռցուելու կը տարուին,  
Ու սպաննուելու վրայ եղողները աշտելէն  
ետ մի կենար :
- 12 Թէ որ ըսես թէ Մենք ասիկա չդիտցանք,  
Ահա սիրտերը կշուղը ինքը կը հասկընայ .  
Ու քու հողիդ պաշտպանողը ինքը դիտէ ,  
Եւ ամեն մարդուն իր դորձքին չափովը պիտի հատուցանէ :
- 13 Որդեակ իմ , մեղք կեր , որ աղէկ է ,  
Եւ մեղքախորիսխ իւր , որ քմացդ քաղցը է :
- 14 Իմաստութեան ճանաչումն ալ քու հոգիիդ  
այնպէս +առց պէտէ ըլլա ,  
Թէ որ զանիկա զտնես .  
Եւ վախճան մը կայ ,  
Ու քու յոյսդ պիտի չկտրի :
- 15 Ով չար , արդարին տանը դարանակալ մի  
ըլլար ,  
Անոր բնակարանը մի աւրեր :
- 16 Վասն զի արդարը թէե եօթը անդամ ալ  
իյնայ՝ պիտի կանդնի .  
Բայց չարերը ճախորդութեան մէջ պիտի իյնան :
- 17 Երբոր քու թշնամիդ իյնայ՝ մի ուրախանար ,  
Աւ երբոր անոր ոտքը սահի՝ քու սիրտոյ  
թող չցնծայ :
- 18 Զըլլայ որ Տէրը տեսնէ ու իրեն անհաճոյ երենայ ,  
Եւ իր բարկութիւնը անոր վրայէն դարձընէ :  
19 Զարագործներուն համար մի սրտմտիր ,  
Ու ամբարիշտներուն մի նախանձիր .  
20 Վասն զի չար մարդը բայրէ վախճան չունենար .

- Ամբարիշտներուն ճրագը պիտի մարի :
- 21 Որդեակ իմ, Տէրոջմէ ու թաղաւորէն  
վախցիր,
- Եւ խոռվարար մարդոց հետ մի խառնուիր :
- 22 Քանզի անոնց կործանումը յանկարծ կ'ըլ-  
լայ,
- Ու երկուքին ալ պատուհասը ովլ դիտէ :
- 23 Աս բաներն ալ իմաստուններուն յարու-  
է.
- Դատոստանի մէջ աչտութիւն ընելը աղեկ  
չէ :
- 24 Ով որ ամբարշտին կ'ըսէ թէ Դուն արդար  
ես,
- Ազգերը անոր անեծը պիտի տան,
- Ու ժողովուրդները զանիկա պիտի անարդեն :
- 25 Բայց յանդիմանութիւն տուողներուն շը-  
նորհ.ք կ'ըլլայ,
- Եւ անոնց վրայ բարի օրհնութիւն կու դայ :
- 26 Ծիտակ պատասխան տուողը  
Ծրթունքներ կը համբուրէ :
- 27 Դուրիսի գործքդ կանոնաւորէ,
- Եւ զանիկո քու արտիդ մէջ կարդի դեր,
- Ու տունդ ետքը շինէ :
- 28 Քու դրացիիդ դէմ զուր տեղը վկայու-  
թիւն մի ըներ,
- Եւ քու շրթունքներովդ մի խարեր :
- 29 Մի ըսեր թէ Անիշա ինծի ինչպէս որ ըրաւ,  
ես ալ անոր այնպէս պիտի ընեմ,
- Ան մարդուն իր գործքին համնմատ հատու-  
ցոււ զիտի ընեմ :
- 30 Ծոյլ մարդուն արտին քովէն՝  
Ու պակասամիտ մարդուն այդիին քովէն  
անցայ .

- 31 Եւ ահա ամենուն մէջը փուշեր բուսեր էին ,  
Ու անոնց երեսը եղինձներ ծածկեր էին ,  
Եւ անոր քարէ պատը փլած էր .
- 32 Ու երբոր շահիստ տեսայ՝ մտրիս մէջը պա-  
հեցի ,
- Առոր նայեցայ ու անիւ խրատ առի :
- 33 Թէ որ քիչ մը քնանաս , քիչ մը նիրհես ,  
Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու  
համար ,
- 34 Քու աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի  
գայ ,
- Եւ քու կարօտութիւնդ՝ սպառաղինեալ  
մարդու պէս :

## ԳԼ. ԻԵ

- 1 Առոնք ալ Սողոմոնին առակներն են , որ  
Յուդայի Եղեկիա թագաւորին մարդիկը օրի-  
նակեցին :
- 2 Բանը ծածկելը Աստուծոյ փառքն է .  
Բայց թագաւորներուն փառքը բանը աղէն  
քննելն է .
- 3 Երկնից բարձրութիւնը ու երկրիս խորու-  
թիւնը
- Եւ թագաւորներուն սիրտը չքննուիր :
- 4 Վերցուր արծաթէն կղկղանքը ,  
Ու ոսկերիչին համար հաւաք անօթ կ'ելէ :
- 5 Վերցուր թագաւորին առջևէն ամբարիշտը ,  
Ու անոր աթոռը արդարութեամբ կը հաս-  
տատուի :
- 6 Թագաւորին առջևը մի պարծիր ,  
Եւ մեծերուն տեղը մի կենար .
- 7 Վասն զի աղէկ է որ քեզի ըսեն թէ չոս ե-  
լիր .
- Քան թէ քու աչքերուդ տեսած իշխանին  
առջևը վար իջեցընեն քեզ :

- 8 Կոխւի համար շուտով դուրս մի ելեկը .  
 Զըլլայ թէ երբոր ընկերդ քեզ ամչցընէ ,  
 Դուն վերջը ինչ ընելիքդ չէ ունասա :  
 9 Ընկերիդ հետ քու դատդ վարէ ,  
 Բայց դաղտնիքը ուրիշն մի յայտներ .  
 10 Զըլլայ որ լսողը քեզ անարդէ .  
 Ու դէշ անունդ անջնջելի մնայ :  
 11 Յարմարութեամբ ըսուած խօսքը՝  
 Արծաթէ զարդերու մէջ որուած ոսկիէ  
 Խնձորներու կը նմանէ :
- 12 Իմաստունին յանդիմանութիւնը՝ մտիկ ընող  
 ականջին  
 Ոսկիէ ող ու մաքուր ոսկիէ մանեակ է :  
 13 Հաւատարիմ դեսպանիր՝ զի՞նքը իրկողներուն  
 Հունձրի ատենի ձիւնին զովութեանը պէս է ,  
 Եւ իր տիրոջը հողին կը զուարձացընէ :  
 14 Սուտ առատաձեռնութեան վրայ պարծեն-

ցողը

- Անանձեւ ամազերու ու հովի ունէ է :  
 15 Համբերութեամբ իշխանին սիրտը կը շինուի  
 Եւ անոյշ լեզուն ոսկորներ կը կոտրէ :  
 16 Թէ որ մեղք զտնես՝ քեզի բաւական եղածին  
 չափ կեր ,  
 Զըլլայ որ անով կշտանաս ու զանիկա փըս-  
 խես :  
 17 Քու ոտքդ դրացիիդ տունը յաճախ չկոխէ ,  
 Զըլլայ որ քեզմէ ձանձրանայ ու քեզ ատէ :  
 18 Իր դրացիին համար սուտ վկայութիւն ը-  
 նողը  
 Ուռի , սուրի և որած նետի ունէ է :  
 19 Նեղութեան օրը անհաւատարիմ մարդու  
 սպաւինելը  
 Փշուող ակռայի և դիւրագլոր ոտքի տողա-  
 ւնելու ունէ է :

- 20 Տրտում մարդուն առջեր երգեր երգողը  
Ցուրտ օրը էր զգեստը հանողին,  
Կոյ բորակի վրայ լուծուած քացախին է  
Նշանի :
- 21 Թէ որ թշնամիդ անօթի է, անոր հաց կեր-  
ցուր ,  
Ու թէ որ ծարաւ է, անոր ջուր խմցուր .
- 22 Քանզի առանի ընկըլ անոր զլսուն վրայ կրա-  
կի կայծեր կը դիզես ,  
Եւ Տէրը քեզի հատուցում պիտի ընէ :
- 23 Հիւսիսային հովը անձրեր կը ցրուէ ,  
Ու խոժոռ դէմքը՝ չարախօս լեզուն :
- 24 Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ ,  
Քան թէ կոռւասէր կնկան հետ մեծ տան  
մէջ :
- 25 Ինչպէս է պաղ ջուրը ծարւած մարդուն ,  
Ասանկ ալ է հեռու երկրէ եկոծ բարի լուրը :
- 26 Զար մարդուն առջեր իյնող արդարը  
Պղտորուած աղբիւրի ու աւրուած ակի է  
Նշանի :
- 27 Շատ մեղը ուտելը աղէկ չէ ,  
Եւ մարդուն իր փառքը փնտռելը փառք չ :
- 28 Իր ողին չզսպող մարդը  
Փլած ու անպարիսպ քաղաքի պէս է :

## ԳԼ. Ի՞՞

- 1 Ինչպէս որ ամառուան մէջ ձիւն , և հունձ-  
քի ատեն անձրեն  
Այնպէս ալ յիմարին պատիւ չվայլեր :
- 2 Ինչպէս որ ճնճղուկը կը պտըտի , ու ծիծեռ-  
նիկը կը թռչի ,  
Այնպէս ալ առանց պատճառի անէծքը  
չդար :
- 3 Զիւն խարազան ու իշուն սանձ

- Եւ յիմարներուն կոնակին գաւազան պէտք է :  
 4 Յիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան մի տար ,  
 2 ըլլայ որ դուն ալ անոր նմոն ըլլաս :  
 5 Յիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան տուր ,  
 Զըլլայ որ անիկա վիճաքը իմաստուն կարծէ :  
 6 Յիմարին ձեռքովը խօսք խըկողը  
 իր ոտքերը կը կտրէ ու վխաս կը քաշէ :  
 7 Ինչու որ կաղին ոտքերը կ'երերան ,  
 Այնպէս ալ յիմարին բերնին մէջ առակը :  
 8 Յիմարին պատիւ տուողը  
 Քարակոյտի մը մէջ պատուաչան քարերու  
 ծրար դնողն կը նմանի :  
 9 Առակը յիմարին բերնին մէջ  
 գինովին ձեռքը մտնող փուշին պէս է ,  
 10 Մէծ է ամէն բան Ստեղծողը ,  
 Որ յիմարին վարձք կու տայ , և յանցաւորներուն վարձք կու տայ :  
 11 Ինչու որ շունը իր փսխածին կը դառնայ ,  
 Այնպէս ու յիմարը իր յիմարութեանը կը դառնայ :  
 12 Զինքը իմաստուն կարծող մարդ մը տեսա՞ր .  
 Աւելի յոյս կայ յիմարէն քան թէ անկէ :  
 13 Ծոյլը կ'ըսէ թէ ճամրուն մէջ առիւծ կայ ,  
 Հրապարակներուն մէջ առիւծ :  
 14 Ինչու որ դուռը իր ծղխնիներուն վրայ կը դառնայ ,  
 Այնպէս ալ ծոյլը իր անկողինին վրայ :  
 15 Ծոյլը իր ձեռքը ամանին մէջո կը խոթէ ,  
 Ու բերանը անդամ տանելու դժուարութիւն  
 կը զդայ :  
 16 Ծոյլը իր աչքերուն  
 Խելացի պատասխան տուող եօթը մարդէն  
 աւելի իմաստուն կ'երևնայ :

- 17 Երենը չեղած դատին համար բարկացող անցաւորը  
Ըունը ականջներէն բռնողին պես է :
- 18 Ինչպէս կատղած մարդը՝ որ կրակի կայծեր,  
նետեր ու մահ կը ցանէ ,
- 19 Այնպէս է ան մարդը՝ որ իր բարեկամին  
նենդութիւն կ'ընէ ,
- Ու Երեւ կ'ըսէ , Ահա կատակ ըրի :
- 20 Առանց փայտի կրակը կը մարի ,  
Եւ թէ որ քսու չըլլայ , կոփւը կը դադարի :
- 21 Ինչպէս ածուխը կայծերուն , ու փայտը կրակին ,  
Այնպէս է կոռուասէր մարդը վէճ բռընկցը-  
նելու :
- 22 Քսու մարդուն խօսքերը քաղցր պատառ-  
ներու պէս են ,  
Ու անոնք մինչև փորին շտեմարանները կ'իջ-  
նեն :
- 23 Եռանդուն շրթունքները և չար սիրտը  
Արծաթի կղղանքով ապիկած հողէ ամա-  
նի իւնանին :
- 24 Ատեցողը իր շրթունքներովը կը կեղծէ ,  
Ու սրտին մէջը նենդութիւն կը պահէ .
- 25 Անոր գեղեցիկ խօսուածքին չհաւատաս .  
Վասն զի անոր սրտին մէջը եօթը զզուելի  
բան կայ :
- 26 Ան որ էր ատելութիւնը նենդութեամբ կը  
ծածկէ ,  
Անոր չարութիւնը ժողովքի մէջ պիտի  
յայտնուի :
- 27 Փոս փորողը ինքը մէջը պիտի իյնայ ,  
Եւ ան որ քար կը զլորէ՝ իրեն պիտի դառ-  
նայ :
- 28 Ստախօս լեզուն իր ծէծածները կ'ատէ .  
Ու շողոքորթող բերանը կորուստ կ'ընէ :

ԳԼ. ԻԵ

- 1 Վաղուան համար մի պարծիք ,  
Վասն զի չես գիտեր թէ օրը ինչ պիտի ծը-  
նանի :
- 2 Քեզ ուրիշը գովէ և չէ թէ քու բերանդ ,  
Օտարը՝ և չէ թէ քու շրթունքներդ :
- 3 Քարը ծանրութիւն՝ ու աւազը բեւ ունէ .  
Բայց յիմարին բարկութիւնը երկուքէն ալ  
ծանր է :
- 4 Բարկութիւնը անողորմ է , ու սրտմտու-  
թիւնը խիստ է .  
Բայց նախանձին առջեր ո՞վ կընայ կենալ :
- 5 Յայտնի յանդիմանութիւնը  
Ծածուկ սէրէն աղէկ է :
- 6 Բարեկամին գուած վէրբերը հաւատարիմ են .  
Բայց թշնամիին համբոյրները առատ են :
- 7 Կուշտ մարդը խորիսիր կ'արհամարհէ .  
Բայց անօթի մարդուն ամէն լեզի բան ա-  
նոյշ կու գայ :
- 8 Իր տեղէն թափառական եղող մարդը՝  
Իր բոյնէն թափառական եղող թուչունին  
պէս է :
- 9 Եղը ու խունկը սիրտը կը զուարծացընեն .  
Նմանապէս բարեկամին քաղցրութիւնը՝  
մտերիմ խորհրդով :
- 10 Քու բարեկամդ ու քու հօրդ բարեկամը  
մի թողուր ,  
Եւ քու նեղութեանդ ատենը քու եղբօրդ  
տունը, մի երթար .  
Մօտ գրացին հեռու եղող եղբօրմէ աղէկ է :
- 11 Որդեակ իմ , իմաստուն եղիր ու սիրտս ու-  
րախացուր ,  
Որ զիս անարգողին պատասխան տամ :

- 12 Խորադէտը չարեքը կը տեսնէ ու կը զդու-  
շանայ .
- Բայց միտամիտները առաջ կ'անցնին ու վսաս  
կը կրեն :
- 13 Օտարականի մը երաշխաւոր եղողին զգես-  
տը առ ,
- Եւ օտար կնկան համար էրալիստոր էղողին  
գրաւ առ :
- 14 Թէ որ մէկը առաւօտուն կանուխ ելլէ , ու  
իր դրացին բարձր ձայնով օրհնէ ,  
Ասիկա անոր անէծք կը սեպուի :
- 15 Անձրեսոտ օրուան շարունակ կաթիլը  
Ու կոռւասէր կնիկը իրարու կը նմանին .
- 16 Զանիկա ծածուկ պահողը հովը կը պահէ ,  
Եւ աջ ձեռքին մէջ պահուած եղը զնուէ կը  
յայտնէ :
- 17 Երկաթը երկաթով կը սրուի ,  
Ու մարդը իր բարեկամին երեսը կը սրէ .
- 18 Թղենիին հոդ տանողը անոր պտուղը կ'ուտէ ,  
Եւ իր տէրը պահպանողը պատիւ կը դանէ :
- 19 Ինչպէս ջուրը՝ երեսը երեսին ,  
Նոյնպէս աւ սիրտը մարդը մարդուն իւ շու-  
շընէ :
- 20 Դժոխքը ու կորուստը չեն կշտանար .  
Մարդուն աչքերն ալ չեն կշտանար :
- 21 Ինչու հալոցը արծաթը՝ և քուրան ուկին  
իւ գործէ ,
- Այնպէս ալ մարդը զինքը դովող բերասը  
լուշ գործէ :
- 22 Յիմարը ցորենի հետ անկանի մէջ սանդի-  
տուով ծեծես ալ ,
- Անոր յիմարութիւնը անկէ չերթար :
- 23 Քու ոչխարներուդ վճակը աղէկ զիտցիր ,  
Եւ ու հօտերուդ տղէկ նայէ .
- 24 Վասն զի հարստութիւնը միշտ չմնար ,

- Ու թաղը դարե՛ ՚ի դար չտեեր :
- 25 կանանչը կը բուսնի , խոտը կ'երևնայ ,  
Եւ լեռներուն խոտերը կը ժողվուին :
- 26 Գառները քու հագուստիդ համար են ,  
Ու նոխազները գաշտերուն դինն են .
- 27 Քու կերակուրիդ համար և քու տանդ կե-  
րակուրին համար
- Ու քու աղախիններուդ ապրուստին համար  
Բաւական այծի կաթ ոչիու աւանդնաս :

## ԳԼ. ԻԼ

- 1 Ամբարիշտը առանց մէկու մը հալածելուն  
կը փախչի .
- Բայց արդարները առոյդ առիւծի պէս քա-  
ջասիրտ կ'ըլլան :
- 2 Երկրին յանցանքովը անոր իշխանները շատ  
կ'ըլլան .
- Բայց անոր վիճակը իմաստուն ու զիտուն  
մորդուն ձեռքովը շտու արէն կը դի-  
մանոյ :
- 3 Աղքատները ղրկող չքաւոր մարդը՝  
Հացի կարօտութիւն բերող յորդահոս անձ-  
րեի ուն է :
- 4 Օրէնքը մերժողները ամբարիշտները կը դո-  
վն .
- Բայց օրէնքը պահողները անոնց դէմ կը կե-  
նան :
- 5 Չար մարդիկ իրաւունքը չեն հասկրնար .
- Բայց Տէրը փնտուղները ամէն բան կը հա-  
կրնան :
- 6 Իր կատարելութեանը մէջ քալող աղքատը՝  
Ծուռ ճամբաննեցւ մէջ քալող հարուստ  
մարդէն աղէկ է :
- 7 Օրէնքը պահողը իմաստուն տղայ է .

Բայց շուայլներուն բարեկամ եղողը իր հայրը  
կ'ամցցընէ :

8 Իր ստացուածքը տսկոսիքով և վաշխով ա-  
ւելցընողը՝

Զանիկա աղքատին ողորմութիւն ընողին  
համար կը ժողվէ :

9 Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձընէ  
իր ականջը,

Անոր աղօթքը անգամ պիղծ է :

10 Ուղիղները չար ճամբու մէջ մնլորեցընողը իր  
փոսին մէջը պիտի իյնայ .

Սակայն արդարները բարիք պիտի ժառան-  
գեն :

11 Հարուստ մարդը իր աչքերուն իմաստուն  
կ'երևնայ .

Բայց հանճարեղ աղքատը զանիկա կը քննէ :

12 Երբոր արդարները ուրախանան , մեծ փառք  
կ'ըլլայ .

Բայց երբոր ամբարիշտները բարձրանան ,  
մարդ կը փնտուուի :

13 Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն  
չդտնէր ,

Բայց զանան խոստովանողը ու մէկդի ձգողը  
ողորմութիւն կը դտնէ :

14 Միշտ վտիցող մարդը երանելի է .

Բայց իր սիրու խստացընողը չարիքի մէջ  
պիտի իյնայ :

15 Աղքատ ժողովուրդի վրայ իշխող ամբա-  
րիշտը

Մոնչող առիւծի ու անյադ արջու չը նմանէ :

16 Խոհեմութիւն չունեցող իշխանը շատ զըր-  
կողութիւններ չընէ .

Բայց ագահութենէ զգուողը իր կեանքը կ'ա-  
ւելցընէ :

17 Արիւնապարտ մարդը մինչև դուքը կը փախչի.

Թող մէկը չպաշտպանէ զանիկա :

18 Կատարելութեամբ քալողը փրկութիւն կը դտնէ .

Բայց ծուռ մարդը ո՞ւ երկու ճամբով իւ+ալ ,  
անսաց մէկուն մէջը կ'իյնոյ :

19 Իր երկերը գործողը հացով պիտի կշտանայ ,  
Ու դատարկ մարդոց հետեւղը աղքատու-  
թեամբ պիտի լեցուի :

20 Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւններ  
իւ+առնէ .

Բայց հարուստ ըլլալու արտորացողը պիտի  
չարդարանայ :

21 Աչառութիւն ընելը աղեկ չէ .  
Վասն զի պատառ մը հայի համար մարդ  
յանցանք կը գործէ :

22 Չար աչք ունեցող մարդը հարուստ ըլլալու  
կ'արտորայ ,  
Ու չդիտեր որ իր վրան աղքատութիւն պի-  
տի դայ :

23 Մարդ յանդիմանողը վերջապէս շնորհք կը  
դտնէ .

Լեզուով շողոքորթութիւն ընողէն աւելի :

24 Ան որ իր հայրը կամ իր մայրը կը կողոպ-  
տէ , ըսելով թէ Յանցանք չէ ,

Անիկա ապականարար մարդուն ընկերն է :

25 Հպարտ սիրտ ունեցող մարդը կոիւ կը հա-  
նէ .

Բայց Տէրոջը ապաւինողը պիտի դիրնայ :

26 Իր սրտին ապաւինողը անմիտ է .

Բայց իմաստութեամբ քալողը պիտի աղատի:

27 Աղքատին տուողը կարօտ չըլլար .

Բայց անիւ երես դարձընողը շատ անէծքներ  
իւ+առնէ :

28 Թէ որ ամբարիշտները բարձրանան , մարդիկ  
կը պահուին .

Բայց թէ որ անոնք կորսուին, արդարները  
կը շատնան :

## ԳԼ. ԻԹ

- 1 Շատ անդամ յանդիմանուած մարդը՝ որ  
իր պարանոցը կը խստացընէ,  
Յանկարծ պիտի կոտրուի ու բժշկութիւն  
պիտի չդտնէ :
- 2 Թէ որ արդարները զօրանան, ժողովուրդը  
կ'ուրախանայ .  
Բայց երբոր ամբարիշտը իշխանութիւն կ'ու-  
նենայ, ժողովուրդը կը հեծէ :
- 3 Իմաստութիւն սիրող մարդը իր հայրը կ'ու-  
րախացընէ .  
Բայց պոռնիկներուն ընկեր եղողը ստա-  
ցուածքը կը ցրուէ :
- 4 Թագաւորը արդարութեամբ կը հաստատէ  
էր երկիրը .  
Բայց կաշառք առնողը զանիկա կը կործանէ :  
5 Եր ընչերին շողոքորթութիւն ընող մարդը  
Անոր քայլերուն որոգայթ կը լարէ :  
Զար մարդուն ամբարշտութեանը մէջ որո-  
դայթ կայ .  
Բայց արդարը ցնծութեան և ուրախութեան  
մէջ պիտի ըլլայ :
- 7 Արդարը աղքատներուն դատը դիտէ  
Բայց չար մարդը տեղեակ չըլլար :
- 8 Ծաղը ընող մարդիկ քսղաքը կը բռընկցը-  
նեն .  
Բայց իմաստունները բարկութիւնը կը դադ-  
րեցընեն :
- 9 Իմաստուն մարդը երբոր յիմարին հետ վե-  
ճարանութիւն կը լնէ ,  
Թէ սրդողի և թէ ծիծաղի՝ հանդիսատ չըլլար :
- 10 Արիւնահեր մարդիկ արդարը կ'ատեն .

Բայց ուղիղները անոր որպիսութիւնը կը հարցընեն :

11 Յիմարը իր միտքը բոլորովին կը յայտնէ .

Բայց իմաստունը զանիկա ուրիշ ատենի կը պահէ :

12 Սուտ խօսքերու ականջ դնող իշխանին  
Բոլոր ծառաները չար կ'ըլլան :

13 Աղքատը ու բունաւորը իրարու հանդիպեցան ,

Երկուքին ալ աչքերուն լոյս տուողը Տէրն է :

14 Աղքատները ճշմարտութեամբ դատող թաւորին աթոռը

Յաւիտեան հաստատ կ'ըլլայ :

15 Գաւազնը ու յանդիմանութիւնը իմաստութիւն կու տայ .

Բայց էր իստոց ձգուած տղան իր մայրը  
կ'ամրէցընէ :

16 Երբոր ամրարիշտները շատնան , յանցանքը  
կը շատնայ .

Բայց արդարները անոնց իյնալը պիտի տեսնեն :

17 Խրատէ քու որդիդ , որ քեզ հանդստացընէ ,  
Եւ քու հոգիդ զուարձացընէ :

18 Առանց մարդարէութեան ժողովուրդը կը խոտորի ,

Բայց ճրէնքը պահողը երջանիկ կ'ըլլայ :

19 Հասկը ցող ու պատոսիսան չտուող ծառան  
Խօսքերով չիրատուիր :

20 Իր խօսքերուն մէջ արտորացող մարդ մը  
տեսա՞ր .

Աւելի յոյս կայ յիմարէն քան թէ անկէ :

21 Թէ որ մէկը իր ծառան տղայութենէն փափ-  
կութեամբ կը մեծցընէ ,

Վերջապէս անիկա իր տղան կ'ըլլայ :

22 Բարկասիրտ մարդը կոխւ կը հանէ ,

Եւ ցասկոտ մարդը շատ յանցանքներ իւ հործէ :  
23 Մարդուն հպարտութիւնը զինքը կը կործա-  
նէ .

Բայց հեղահոգի մարդը փառք կը վաստըիի :  
24 Գողին ընկեր եղողը իր հոգին կ'ատէ ,  
Անիկա երդումը կը լսէ , ու եր հերածը չը-  
յայտներ :

25 Մարդու վախը որոգայթի մէջ կը ձղէ .

Բայց Տէրոջը ապաւինողը ամուր ապաստա-  
նարան կ'ունենայ :

26 Շատերը իշխանին երեսը կը փնտռեն .

Բայց մարդուն իրաւունքը Տէրոջմէն է :

27 Անօրէն մարդը արդարներուն զզուելի է ,  
Եւ ուղղութեամբ քալողը ամբարշտին զբգ-  
ուելի է :

### ԳԼ. 1

1 Յակէեան Ագուրին խօսքերը՝  
Այսինքն պատգամը՝ որ անիկա Իթիելին  
խօսեցաւ ,  
Իթիելին և Ուրալին :

2 Յիրաւի ես աճն մարդէ թանձրամիտ եմ ,  
Ու ես մարդկային խոհեմութիւն չունիմ .

3 Եւ իմաստութիւն չսորվեցայ ,

Ու Ամենասուրբին գիտութիւնը չե՞՞ գիտեր :

4 Եթինքը ով ելաւ ու իջաւ .

Հովը իր ձեռքերուն մէջը ով ժողվեց .

Զուրերը էր հանդերձին մէջ ով ամփոփեց .

Երկրիս բոլոր ծայրերը ով հաստատեց .

Անոր անունը ի՞նչ է , ու անոր որդւոյն  
անունը ի՞նչ է .

Թէ որ գիտես՝ ըսէ :

5 Աստուծոյ ամէն խօսքը մարդուր են .

Անիկա իրեն ապաւինողներուն ասպար է :

6 Դուն անոր խօսքերուն վրայ բան մի աւել-  
ցըներ .

Որ չըլլայ թէ քեզ յանդիմանէ , ու դուն  
ստախօս երենաս :

7 Քեզմէ երկու բան կը խնդրեմ ,  
Մեռնելէս առաջ զանան ինձմէ մի արդիլեր .

8 Ունայնութիւնը և սուտ խօսքը ինձմէ հե-  
ռացուր .

Ինձի աղքատութիւն կամ հարստութիւն  
մի տար .

Իմ սովորական հացովս զիս կերակրէ .

9 Չըլլայ որ կշտանամ և +ԵՆ ուրանամ ,  
Ու Տէրը ո՞վ է , ըսեմ .

Եւ չըլլայ որ աղքատանամ ու դողութիւն  
ընեմ ,

Եւ իմ Աստուծոյս անունը պարապ տեղը  
բերան առնեմ :

10 Ծառայի մը համար իր տիրոջը ամբաս-  
տանութիւն մի ըներ ,

Չըլլայ որ քեզի անէծք տայ , ու դուն յան-  
ցաւոր գտնուիս :

11 Ցեղ կայ որ իր հայրը կ'անիծէ ,  
Եւ իր մայրը չօրհներ :

12 Ցեղ կայ որ իր աչքին առջել մաքուր է ,  
Ասկայն իր աղտեղութենէն լուացուած չէ :

13 Ցեղ կայ որ անոր տչքերը խիստ ամբար-  
տաւան են ,

Ու անոր արտեանունքները բարձրացած են :  
14 Ցեղ կայ որ անոր ակուաները սուրերու պէս  
են ,

Եւ տնոր ժանիքները դանակներու պէս են ,  
Աղքատները չըկրիս վրայէն :

Ու տնանկները մարդոց մէջէն ուտելու հա-  
մար :

- 15 Տղրուկը Երկու աղջեկ ունի .  
Տուր՝ տուր՝ Վլուկն :
- Աս Երեքը չեն կշտանար ,  
Ու չորս բան կայ ո՞ւ Հերիք է չեն ըսեր .
- 16 Գերեզմանը , ամուլ արգանդը ,  
Երկիրը որ ջրով չկշտանար  
Ու կրակը որ Հերիք է չըսեր :
- 17 Ան աչքը որ իր հայրը ծաղը կ'ընէ ,  
Եւ իր մօրը հնապանդիլը կ'անարգէ ,  
Զորերուն աղուաւները պիտի փորեն ,  
Ու զանիկա արծիւներուն ձագերը պիտի ու-  
տեն :
- 18 Աս երեք բանը ինծի զարմանալի կ'երևնայ ,  
Եւ չորս բան կայ որ չեմ զիտեր .
- 19 Օդին մէջը արծիւին ճամբան ,  
Ապառաժի վրայ օձին ճամբան ,  
Շալուն մէջը նաւուն ճամբան  
Ու աղջկան քով Երիկ մարդուն ճամբան :
- 20 Ընացող կնկան ճամբան ալ այնպէս է .  
Կ'ուտէ ու բերանը կը սրբէ ,  
Եւ Զարութիւն չըրի՝ կ'ըսէ :
- 21 Երեք բանի համար երկիրը կը դողայ ,  
Ու չորս բան կայ , որոնք չկրնար տանիլ .
- 22 Ժառան երբոր թագաւորէ ,  
Ծիմարը Երբոր հացով կշտանայ ,
- 23 Ատելի կնիկը երբոր կարգուի  
Եւ աղախինը երբոր իր տիկնոջը ժառանդ  
ըլլայ :
- 24 Երկրիս վրայ չորս բան կայ որ պղտիկ են :  
Բայց անոնք շատ խելացի են .
- 25 Մրջեւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն ,  
Բայց իրենց կերակուրը ամառուընէ կը պատ-  
րասին .

- 26 Ճագարները տկար ժողովուրդ մըն են,  
Բայց իրենց տուները վէմերու մէջ կը շինեն .
- 27 Մարախները թագաւոր չունին ,  
Սակայն ամէնը զունդ զունդ զուրս կ'ելլեն .
- 28 Մողեսը էր ձեռքերովը պարտեւած կը փակչէ,  
Ու թագաւորաց պալատներուն մէջ կը զըտ-  
նուի :
- 29 Աղեկ քալող երեք բան կայ .  
Եւ չորս բան կայ որ զեղեցիկ քալուածք  
ունի .
- 30 Առիւծը՝ որ ամէն անասուններէն զօրաւոր է,  
Ու բնաւ մէկուն երեսէն ետ չդառնար .
- 31 Մէջքը կապած չին ու նոխազը ,  
Եւ թագաւորը՝ որուն ժողովուրդը իր հետն է
- 32 Թէ որ բարձրանալով յիմարութիւն ըրիր,  
Կամ մէկ չարութիւն մը մտածեցիր ,  
Ձեռքդ բերնիդ վրայ ո՞ւ .
- 33 Վասն զի թէ որ կաթը ծէծես՝ կողի կ'ելլէ ,  
Թէ որ քիթը ճմիւս՝ արիւն կ'ելլէ .  
Նոյնպէս թէ որ բարկութիւնը զբգուս՝ կոիւ  
կ'ելլէ :


## ԳԼ. ԼԱ

1 Լեմուէլ թագաւորին խօսքերը՝  
Այսինքն պատղամը՝ որ անոր մայրը բնոր  
սորվեցուց :

- 2 Ի՞նչ ըսէմ, ով որդեակ իմ ,  
Ի՞նչ ըսէմ, ով իմ որովայնիս որդին ,  
Ի՞նչ ըսէմ, ով իմ ուխտերուս որդին :  
3 Քու զօրութիւնդ կնիկներուն մի տար ,  
Ոչ ալ քու ճամբաներդ թագաւորներ բնա-  
ջինջ ընողներուն :
- 4 Ով Լեմուէլ, թագաւորներուն սվայլեր ,

- Գինի խմելը թագաւորներուն չվայլեր ,  
 Եւ օղի խմելը իշխաններուն չվայլեր .
- 5 Զըլլայ որ խմեն ու օրէնքը մոռնան ,  
 Եւ տառապեալներէն մէկուն դատաստանը  
 ծռեն :
- 6 Օղին՝ կորսուելու վրայ եղողին ,  
 Ու դինին դառնահողիններուն տուեր ,
- 7 Որ անոնք խմեն ու իրենց աղքատութիւնը  
 մոռնան ,  
 Եւ իրենց նեղութիւնը մէջմնա ալ չյիշեն :  
 8 Բաց քու բերանդ համր մարդուն համար ,  
 Ու բոլոր անինամ մնացածներուն դատին  
 համար :
- 9 Բաց քու բերանդ , արդարութեամբ դատէ ,  
 Եւ աղքատին ու տնանկին դատաստանը  
 տես :
- 10 Առաքինի կնիկը մվ կրնայ դտնել .  
 Անոր դինը գոհարներէն շատ աւելի է ,  
 11 Անոր երկանը սիրուր անոր վրայ վստահ է ,  
 Ու աւարի կարօտ չըլլար :
- 12 Անիկա իր կենացը բոլոր օրերուն մէջ  
 Անոր բարիք կը բերէ և ոչ թէ չարիք :
- 13 Բուրդ ու քթան կը փնտուէ ,  
 Եւ ուղածը ձեռքովը կը գործէ :
- 14 Անիկա վաճառականի նաւերուն կը նմանի .  
 Իք հացը հեռու տեղէն կը բերէ :
- 15 Եւ անիկա դիշերով կ'ելլէ , ու տանը հոր-  
 տոց կերակուր՝
- Եւ իր աղախիններուն բաժին կու տայ :
- 16 Արտի մը վրայ կը խորհի ու դանիկա ծախու  
 կ'առնէ ,  
 Եւ իր ձեռքերուն պտուղէն այդի կը տնկէ :
- 17 Իր մէջքը զօրութեամբ կը պնդէ ,  
 Ու իր բազուկները կը զօրացընէ :
- 18 Իր վաստակին աղէկ ըլլալը կը հասկընայ .

- Անոր ճրաղը դիշերը չմարիր :
- 19 Իր ձեռքերը իլլկին կ'երկընցընէ ,  
Ու ափովը ոռքը կը բռնէ :
- 20 Զեռքը աղքատին կը բանայ ,  
Ու ձեռքերը կարօտներուն կ'երկընցընէ :
- 21 Իր տանը մարդուն համար ծիւնէն չվախնար .  
Քանզի բոլոր ընտանիքը կրկին հանդերձ հա-  
ղած են :
- 22 Իրեն ծածկոցներ կը շինէ .  
Իր հանդերձը բեհեղ ու ծիրանի է :
- 23 Անոր էրիկը կը ճանչցուի դռներուն մէջ  
Երբոր երկրին ծերերուն հետ կը նստի :
- 24 Կտաւ կը դորձէ ու կը ծախէ ,  
Եւ վաճառականներուն գոտիներ կու տայ :
- 25 Զօրութիւն ու փառք կը հագնի .  
Ու ետքի օրերը պիտի ուրախանայ :
- 26 Իր բերանը իմաստութեամբ կը բանայ ,  
Եւ իր լեզուին վրայ քաղցրութեան օրէնք  
կայ :
- 27 Իր տանը ճամբաները կը քննէ ,  
Եւ ծուլութեան հացը չուտեր :
- 28 Անոր տղաքը կ'ելլեն ու ղանիկա երանելի  
կ'անուանեն .
- Անոր էրիկն ալ ղանիկա կը դովէ , ըսէլու .
- 29 Շատ աղջիկներ առափինի եղան ,  
Բայց դուն ամենէն դերազանց եղար :
- 30 Վայելչութիւնը սուտ է , ու գեղեցկութիւ-  
նը ունայն է .
- Սահայ Տէրոջմէ վախցող կնիկը պիտի  
դովուի :
- 31 Տուեր անոր իր ձեռքին պտուղէն .  
Ու անոր դորձքերը դռներու մէջ դովեն զա-  
նիկա :



İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1380\***

255.07.02.01.06.00/

